

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ
ԱՌԱՔԵԼԱՅԱԶՈՐԴ ՉՐՋԱՆ**

THE NEW TESTAMENT

**ՊԱՏՐԱՍԵՑ
ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1997**

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Հաւատքը պատմական փորձառութիւն մը չէ միայն, այլ հանապազօրեայ ապրում մըն է որ կը կարօտի սերտողութեան ու վերանորոգման, նոր արջալոյսներու մէջէն ողջունելու համար կեանքի գեղեցկութիւնները:

Լրացած էին բոլոր մարգարէական նախատեսութիւնները Զրիստոսի մասին, լրացած էին Հին Օրէնքի համար սահմանուած ժամանակը, և սկսաւ նորը՝ Աստուծոյ Թագաւորութեան ժամանակը: Լրացաւ, Հին Ուխտը և կնքուեցաւ նոր Ուխտը Յիսուսի Արիւնով: Վերջացաւ ստուերը, յայտնուեցաւ ճշմարտութիւնը՝ Յիսուս Զրիստոս:

Վերջացաւ Օրէնքի ամենագօր տիրակալութեան ջրջանը և սկսաւ **ԾՆՈՐՀԱՅ** դարը: Լրացան, ի գլուխ հանուեցան Յիսուս Զրիստոսի բոլոր Տնօրինութիւնները մարդոց փրկութեան համար: Գողգոթան որպէս նոր Ուխտի և ներումի կենդանի վկայագիր, յաւերժութեան երաշխիքն է համայն մարդկութեան: Բեթղեհեմի աստղի լոյսէն ներթափանցուած և պայծարացած նոր Կտակարան մը, փայլեցաւ երկնակամարին վրայ: Նոր Կտակարանի իւրաքանչիւր խօսքը և բժշկութիւնը Յարութեան լոյսին առաջնորդող ճանապարհ մըն է:

Հոռմի կայսրին ուղղարկած խօսքը խորհրդարանին.

«Եկայ, տեսայ, յայրենցի».

Յիսուս Զրիստոսի խօսքը համայն աշխարհի.

«Եկայ, սիրեցի, ներեցի»:

Առաքեալներու օրով աստուածային խօսքը ո՛չ թէ Հնգամատեան Օրէնքին մէջն էր, այլ՝ Զրիստոսի *պատգամի՛ն* մէջ (Գործք. Ժ. 36, Ա. Պետ. Ա. 23): Աւետարանել կը նշանակէ՝ Վկայել ճշմարտութիւնը, ո՛չ սոսկ զայն մտքով հասկնալ, խօսքով արտայայտել, գիրով դրոշմել, այլ՝ *կեանքով և գործով ապրիլ*: Պօղոս առաքեալ կը յորդորէ եկեղեցին, ըսելով.

«Աւետարանը միայն խօսքով չ՛հարողու եցաւ ձեզի, այլ նաեւ զօրութիւնով» - Ա. Թես. Ա. 5:

Ա. Նորատուկեան
Ապրիլ 17, 1997

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ

ԻՆՁ ԿԸ ՆՃԱՆԱԿԷ "ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ"

Նոր Կտակարանը Աստուծոյ ուխտն է մարդոց հետ: Աստուծոյ Կտակը կամ պատգամները պարունակող սահմանադրական գրութիւն: Բրիստոնեաներ իրենք կցած են "Սուրբ" բառը այս գրքին և անուանած զայն " *Սուրբ Գիրք*": Մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի վկայութիւնները.

Յիսուս ըսաւ անոնց. *Գրութիւններուն մէջ բնաւ չէ՞ք կարդացած.*--Մատթ. ԻԱ.42: *«Մողորածները ո՛չ Գրութիւնները կը հասկնա՞նք և ո՛չ ալ Աստուծոյ զօրութիւնը»* --Մատթ. ԻԲ.29: *«Էս Գիրքը գոցելով՝ տուաւ պաշտօնեային ու նստաւ»*--Ղուկ. Դ.20

"Ուխտ" կամ "Կտակ" բառերը, Բրիստոնեական հաւատքին մէջ, կու գան մեզի վաղ անցեալէն: Հրեայ ժողովուրդը հետեւելով Մովսէս Մարգարէի, իրենց գաղթական ու թափառական շրջանին, բանակեցան Միտեան լեռան շուրջ: Մովսէս Մարգարէն բարձրացաւ լեռ և հոն Աստուծմէ ստացաւ Օրէնքն ու Տասնաբանեայ Պատուէրները:

Ամբողջ Իսրայէլ կայնած էր Մինա լեռան ստորոտը, Աստուծոյ ներկայութիւնը լեռան վրայէն կանչեց զանոնք և ըսաւ. "Եթէ իրաւէն Իմ ձայնիս հնազանդիք ու Իմ *ուխտս* պահէք, դուք Ինձի սեպհական ժողովուրդ պիտի ըլլա՞ք բոլոր ազգերէն. վասնզի բոլոր երկիրը իմս է: ...Բոլոր ժողովուրդը միաբերան պատասխանեցին ու ըսին, *«Տիրոջը բոլոր ըսածները պիտի ընենք»*":--Ելից ԺԹ.5, 9:

Որովհետեւ Հրեայ ժողովուրդը Աստուծոյ հետ ուխտի մտած էր, Բրիստոնեայ հաւատացեալները՝ Հրեաներուն կրօնագիրքը կոչեցին "Հին Կտակարան" կամ "Հին Ուխտ": Աւետարաններն ու Առաքելական նամակներն ալ կոչուեցան "Նոր Ուխտ" կամ "Նոր Կտակարան", որովհետեւ կցուեցան "Հին Կտակարան" կոչուած Սրբազան Գիրքերուն, որոնք գործածական էին Եկեղեցիներու մէջ: Նոյն սրբազան գիրքերը, մեզի՝ Բրիստոնեաներուս կը ներկայանան որպէս *Աստուածաշունչ*: Մատեանի առաջին մասը, բաղկացեալ 39 գիրքերէ, Ծննդոցէն մինչեւ Մաղափիայ:

Յետագայ դարերուն, Բրիստոսի Եկեղեցին (այդ դարաշրջանին բոլոր ազգաց Եկեղեցիները Մէկ "Տիեզերական" ճանչցուած էին և զանազան եկեղեցիներ՝ յարանուանութիւններ չկային): Եկեղեցին հաւաքեց Աւետարաններն ու սրբազան բոլոր մատենագրութիւնը (Առաքելակա՛ն ճանչցուած չորս Աւետարաններն ու նամակները) և կանոնագրեց:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Նոր Կտակարանը մէկ հեղինակի կողմէ ձեռագրուած *մէկ* գիրք մը չէ, այլ՝ Նոր Կտակարանը, նման ճաճանչագեղ ծիածանի, կը բաղկանայ 27 գիրքերէ: Իր զօրութիւնը կը ցոլացնէ Սուրբ Հոգւոյն ներշնչական հրաշքներով:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ, ԻՆՉՈ՞Ւ ՆՄԱՆ ՄՈՎՍԷՍԻ, ԻՐԵ՛ՆՔ ԶԿԱԶՄԵՑԻՆ

"ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ" ԳԻՐՔԸ

Մովսէս Մարգարէն՝ իր տրամադրութեան տակ ունէր *իրեն հետեւող* ժողովուրդը: Մովսէս ի՛ր ժողովուրդին Օրէնք ու դատաստանագիրք հեղինակեց: Մովսէս իր հաւատքը, իր կրօնը *տարածելու* աշխատանքով չգբաղեցաւ: Մինչդեռ Առաքեալները, Հոռմէական կայսրութեան բոլոր ժողովուրդներուն գացին, ոչ որպէս դատաւորներ իրենց դատաստանագիրքով (ինչպէս Մովսէս ըրած էր), այլ որպէս *Անտարանիչ Ներք*: Առաքեալներուն բերնէն կը հոսէր երգ ու ցնծութիւն, բերկրանք և փրկութիւն: *Մտնելոց Յարութիւն*՝ աւետողներ էին, կեանքի և իսայտանքի ազատութեան ռահ-վիրանե՛ր էին անոնք: Առաքեալներուն հեղինակած գիրքերը, իրենց *ապրու մէ* և անբասիր կենցաղավարութիւնն էին: Իրենց վկայութեան ճշմարտութիւնն ու ստուգութիւնը կնիքեցին իրենց նահատակութեամբ:

Մովսէսի և անոր յաջորդներուն նման՝ Յիսուսի առաքեալները, զէնքով և կոտորածով չկառուցին ու չտարածեցին իրենց հաւատքը, այլ՝ իրե՛նք մեռան ու սպանուեցան որովհետեւ իրենց Աւետարանը ոչ մտացածին և ոչ ալ *աշխարհատիրական* էր, այլ ոգեշնչող ու երկնառաք:

Պենտեկոստէի Սուրբ Հոգեգալուստով ծնաւ Յիսուսի Եկեղեցին: Առաքելահիմ Եկեղեցին հոգեշարժ զօրութիւն, յախտենականի տեսիլք և անկապտելի ուժ էր, և ոչ միայն գրական մատենագրութիւն մը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Աշխարհի *ներկայ Բաղաճակըթութեամբ* և ներկայ դարու գիտութեամբ կարելի չէ ըմբռնել Նոր Կտակարանի կազմութիւնը: Մարդկային ապրելա-կերպը բոլորովին տարբեր էր մինչեւ 19-րդ դար: Արդի մարդկութիւնը կ'ապրի սալահատակուած և լուսազարդուած ֆաղափներու մէջ ուր դժուար կը զանազանես ցերեկը գիշերէն: Անցեալին, գիր և գրականութիւն մենաշնորհն էին ջատ փոքր և առանձնաշնորհեալ ազնուական դասուն: Ժողովուրդը ոչ միայն գրել կարողալ չէր գիտեր, այլ նոյնիսկ՝ հաշուել:

Անգլիոյ մէջ, նախակրթական ուսման պետական ճանաչումը տեղի ունեցաւ 1870-ին և բարեփոխումները տեղի ունեցան միայն 1902-ին: Միացեալ Նահանգներու նման հարուստ երկրի մը մէջ, երկրորդական

վարժարանի ձրի ուսումը գործադրուեցաւ միայն Համաշխարհային Առաջին Պատերազմէն յետոյ:

Վերոյիշեալ կրթական և դաստիարակչական հակիրճ տեղեկութիւնը բաւարար նկատուելու է լուսաբանելու համար, թէ ինչո՞ւ Աւետարանը՝ սկիզբի օրերուն, որպէս մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի Խօսք և Պատգամ, գրի չէ վերածուած: Աւետարանը մատենագրութիւն չէ դարձած որովհետեւ պահա՛նջ չէ եղած: Կարիք չէ եղած, որովհետեւ *ժողովուրդներ գրել կարողալ չէին գիտեր:*

Ինչպէս Յիսուս Ի՛նք, նոյնպէս Իր յաջորդները իրե՛նք եղած են *կենդանի* Աւետարանը հաւատացեալ և ուխտեալ ժողովուրդներուն: Եպիսկոպոս մը, սարկաւագ մը կամ քարոզիչ մը ոչ թէ *գիրքէ՛* մը կը քարոզէին, այլ իրենց վարքո՛վն ու սրբակենցաղ և հոգեշունչ աստուածայայտնութեամբ: Մի՛ ստորագնահատե՛ք անցեալ դարերու Մայր Հայրենիքի Հայ հոգեւորականները որպէս անգրագէտ և անուս: Կրնան անուս եղած ըլլալ այդ քահանաները, բայց ո՛չ երբեք *անհոգի*: Թերեւս չկարենային *խօսքով* բացատրել աստուածաբանական կարգ մը ճշմարտութիւններ, սակայն իրենց *կեանքով*, և նահատակութեամբ յաւերժօրէն կը խօսին մեզի և պիտի խօսին դարեր անվախճան:

ԻՆՉՈ՞Ւ ԳՐԻ ԱՌՆՈՒԵՅԱՆ ԵՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐԸ

Գրի անուեցան, որովհետեւ Առաքեալներու կենդանութեան ջրջանին երբ հաւատամքի հարց մը ծագէր, Առաքելական խօսքը *պատգամ* կը նկատուէր: Պետք չէ մոռնալ նաեւ, թէ Բրիստոնեութիւնը ընդունուեցաւ բազմաթիւ ազգերու և տարբեր լեզուներ խօսող ժողովուրդներու կողմէ, որոնց *մշակոյթն* ու *աւանդութիւնները* իրարմէ կը տարբերէին և երբեմն ալ իրարու ներհակ էին:

Առաքեալները երբ մէկգմէկու ետեւէն նահատակուեցան և սպաննուեցան, առաքելատես և առաքելակից Եպիսկոպոսներ ծրագրեցին պատրաստել հաւատալիքի գրուածք մը որ պիտի դառնար լուսաշափողը փոխարինելու համար առաքելական *կենդանի* խօսքը:

Առաջին դարու եկեղեցական Եպիսկոպոսները իրենք զիրենք հարկադրուած զգացին Հաւատքի՛ Ջատագովականներ գրել միայն, պաշտպանելու համար իրենց դաւանանքը երկրի իշխաններուն դէմ փոխանակ ստուգելու և հաւաքելու Առաքեալներու գրութիւնները:

Ինչո՞ւ: Որովհետեւ քաղաքական կացութիւնը իրենց ջրջանին այդ կը պահանջէր: Մերթ ընդ մերթ, կառավարական հրամաններ կ'ելլէին և իշխանութիւնը կը հաւաքէր Բրիստոնեաները և կը սպաննէր: Անողոք սարսափի և հալածանքի այս ջրջանը տեսց մինչեւ չորրորդ դար:

Եւսեբիոս (Eusebius) որ կը կոչուի Եկեղեցւոյ Պատմահայրը՝ կը յիշէ անվեհեր աւետարանիչ Գուատրասիոս (Quadratus) անուն քրիստոնեայ մը որ

կրօնական առաջին ջատագովութիւնը (այժմ կորսուած) ներկայացուցած է Հատրիան կայսրին 125 թուականին: Եւսեբիոս (Eusebius) ռահվիրան՝ Գուատրատիոսը կը կոչէ "Առաքեալներու ունկնդիր", այսինքն ուղղակի Առաքեալներէ սորված է իր Բարոզչութիւնը:

Եւսեբիոս պատմափոր յիշատակած յաջորդ անձը՝ Pantaeus Աղեմսանդրիոյ փիլիսոփայական ճեմարանի կարողագոյն իմաստասէրը եղած է: Ստոյիկեան փիլիսոփայ Բանդանիոս դարձաւ Քրիստոսի Լոյս հաւատքին՝ և նուիրեց ինքզինքն Աւետարանի Բարոզչութեան: Աթէնակորաս որ Աթէնքի հռչակաւոր իմաստասէրներու հոյլին կը պատկանէր, էր նաեւ աւետարանիչ ու Բարոզիչ 177 թուականներուն: Յուստինոս վկան, ծնած Պաղեստին հեթանոս ծնողքէ, Եփեսոսի մէջ կը դառնայ քրիստոնեայ և Հռովմի մէջ կը գլխատուի Քրիստոսի հաւատքը ջատագովելուն համար: Ասորի Տաշեան (Tatian) և իր ընկերակիցը Յուստինոս՝ միաձուլած էին իրենց իմաստասիրական տաղանդը հաւատքի հետ:

Վերոյիշեալ անձնաւորութիւնները բոլորն ալ հռչակաւոր և ճանչցուած իմաստասէրներ եղած են, պաշտպանելով հանդերձ իրենց լոյս հաւատքն ու փիլիսոփայական վեղարը:

ԻՆՉ ՏԵՍԱԿ ԱՆՉԵՐ ԷԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳԱԻԱՏԱՑԵԱԼ ԲՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Հաւատացեալներու մեծագոյն մասը կը պատկանէին բանուորներու և գերիներու դասակարգին: Մակայն կար նաեւ մտաւորական և իմաստասէրներու դասակարգ մը որոնք Աթէնքի և Աղեմսանդրիոյ ճեմարաններու դասախօսներ էին: Փանթէնոս (Pantaeus) Աղեմսանդրիոյ Քրիստոնեական ճեմարանին տեսուչ տնօրէնն էր: Կղէմէս Աղեմսանդրիացին յաջորդեց իրեն, և անոր ալ յաջորդեց աշխարհահռչակ Որոզինէս (Origen) աստուածաբանը: Հետաքրքրական է յիշատակել Յուստինոս (Justin) վկայի դատավարութենէն դրուագ մը.

Դատախազը կը հարցնէ Յուստինոսի, *"Ո՞ր կը ժողովիք"*: Յուստինոս կը պատասխանէ, *"Ար որ կարենանք, մեր Աստուածը կը պարուրէ համայն տիեզերքը և կը պաշտուի ու կը փառաբանուի բոլոր հաւատացեալներէն ամէն տեղ"*: Դատախազը կը շարունակէ հարցաֆննել թէ ո՞ր է իր բնակարանը: Յուստինոս կը պատասխանէ թէ ինք անձնական տուն չունի, այլ կը բնակի Մարտին անունով մէկու մը համեստ վերնայարկի սենեակը:

Վերոյիշեալ մտաւորական և իմաստասիրական դասակարգին առնթեր, կային նաեւ բազմաթիւ համեստ սակայն ջերմեռանդ հաւատացեալներ: Ասոնց մասին՝ Որոզինէս (Origen) սապէս կը վկայէ: (Որոզինէս Աղեմսանդրիոյ ճեմարանին տեսուչ կարգուած է 18-ը տարեկանին: Ծնած է 185 և մեռած 254-ին: Գրած է մօտ 8 հազար պարբերագիրքեր):

"Քրիստոնեաներ իրենց բոլոր միջոցներով և կարողութեամբ ջանացին տարածել իրենց հաւատքը համայն աշխարհի: Ոմանք ուխտած են շրջագայիլ քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ քարոզել Յիսուս Քրիստոսը և դարձի բերել հեթանոսները":

Անտիոք, Նման Աղեֆսանդրիոյ, մտաւորական օրրանն էր գրականութեան և բանասիրութեան: Այս անուանի քաղաքին Եպիսկոպոսն էր Իգնատիոս (Ignatius) ժամանակակից և բարեկամ Պօղոսկարապոսի՝ Իզմիրնիոյ Եպիսկոպոսին: Ս. Իգնատիոս՝ փարած իր հաւատքին կեր դարձաւ Հռովմի ամփիթատրոնի վայրի գազաններուն 115 թուականին:

Երկրորդ դարու գլխաւոր հաւատքի շատագովներն էին, Անտիոքի Եպիսկոպոս Theophilus 170 թուին, Melito of Սարդիս և Apollinaris of Hierapolis 175 թուականին: Որոգինէսի աշակերտներէն՝ Գրիգոր, որ նաեւ կրչուցաւ *հրաշագործ*, աւարտեց աստուածաբանական ճեմարանը ու դարձաւ աւետարանիչ և մեծ ջարժում տեղծեց Պոնտոսի մէջ, Հայաստանի մօտ:

Որոգինէս աստուածաբանը ժամանակակից էր նաեւ Կարթակէն (Թունիզ, հիւսիսային Աֆրիկէ) քաղաքի Եպիսկոպոս Կիպրիանոսին: Հաւատքի և Յիսուսի սիրոյն Ս. Կիպրիանոս երկարեց իր պարանոցը դահիճի սուրին որպէսզի չ'ուրանայ իր Ֆրիկչն ու Տէրը:

ԿԻՆԵՐՈՒ, ԱՇԽԱՐԿԱԿԱՆՆԵՐՈՒ և ԱՆՈՒՍ ԳԵՐԻՆԵՐՈՒ ԳԵՐԸ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԷՋ

Աստուած կը գործածէ իմաստաւէր մտաւորականն ու նաեւ յետին անուսն ալ: Աստուծոյ փնտրածը *հաւատարմութիւնն* է, իմաստութիւն և հանճար Ան կրնայ տալ:

Ստորեւ կու տանք տեղեկագրութիւն մը որ կու գայ մեզի հակա-Քրիստոնեայ հեղինակներէ որպէս գանգատ և բողոք: Celsus, Քրիստոնէութեան բուռն հակառակորդը, իր հակաՔրիստոնեայ շարժումը կը սկսի 177 թուականին, երկրորդ դարու վերջաւորութեան: Իր գրութիւններով կը հարուածէ ոչ միայն Քրիստոնեայ իմաստասէրներն ու մտաւորականները, այլ թշուառ գերիները և անուս գործաւորները: Չի խնայեր նոյնիսկ մաքրամաքուր կիները: Որովհետեւ վերոյիշեալ մարդկային անբախդ թշուառները, փառաբանողներն էին Յիսուս Քրիստոսին: Ոչ-կղերական այս գործաւոր դասակարգը, իրենց խանդավառ և բերկրալի ապրումով և հաւատարիմ աշխատանքով զարմանք և հիացում կը պատճառէին իրենց տերերուն:

Ազնուական ընտանիքներու մանուկներու խնամքը յանձնուած էր համեստ սպասուհիներու, որոնք կը պատմէին Յիսուսի հրաշագործ պատմութիւնները իրենց յանձնուած մանուկներուն և պատանիներուն: Նոյնիսկ հիւանդութեան պարագային առանց վարանելու, Քրիստոնեայ սպասուհիներ, կը խնդրէին իրենց տիրուհիներէն որ արտօնուի իրենց աղօթել

հիւանդ երախային համար իրենց հաւատացած Աստուծոյն:

Համե՛ստ կիներու և սպասուհիներու միջոցաւ, Բրիստոնէական հաւատքը մուտք գործեց ոչ միայն ազնուական ընտանիքներէ ներս, այլեւ պետական ընտանիքներէ ներս, մինչեւ արքայական պալատները: Միթէ Գրիգոր Պահլաւունի եւս, պարզ աշխարհական պաշտօնեայ մը չէ՞ր Տրդատ Թագաւորի պալատէն ներս:

ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՉՈ՞Ւ Ե Ե՛ՐԲ ՈՐՈՇԵՑ ԿԱԻԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ե ԿԱՆՈՆԱԳՐԵԼ ԶԱՆՈՆՔ

Սկսեալ Առաքեալներու օրերէն, թիւրիմացութիւն տեղի ունեցաւ Հրէաստանի *Հրեայ* Բրիստոնէաներու և *ոչ-Հրեայ* Բրիստոնէաներու միջեւ: Հրեայ Բրիստոնէաներ ծայրայեղ էին իրենց ազգակրօնամոլ համոզումներուն մէջ: Իրենց կրօնահայեացքով, հեթանոս մը նախ հրեայ ըլլալու էր, և յետոյ Բրիստոնէայ: Նորահաւատ Բրիստոնէան, նախ պարտաւոր էր պահել Մովսիսական Օրէնքն ու Պատուիրանները և անոնց վրայ առաւել դառնար Բրիստոնէայ: Մեզի՝ այժմու Բրիստոնէաներուս, որքան ալ տարօրինակ թուի այս կերպ մտածումը, ազգայնամոլ Հրեայ Բրիստոնէաներու համար, միակ և ճշմարիտ Բրիստոնէութիւնն էր:

Ազգայնամոլ հաւատացեալ Հրեաները իրենք եւս որպէս աւետարանիչներ կը շրջէին եկեղեցիէ՝ եկեղեցի և *“Կուսուցանէին եղբայրներու և, (հեթանոսներէ դարձողներուն) Մովսէսի Օրէնքին համաձայն, եթէ չթշխատուի՞” չէ՞ր կրնար փրկուիլ* --Առաք. ԺԵ. 1:

Այս պատճառաւ Պօղոս և Բարնաբաս Առաքեալներ ջատ մը վէճերէ և հակառակութիւններէ յետոյ, վճռեցին երթալ Երուսաղեմ և մասնակցիլ եկեղեցական արաջին Համագումարին ուր ներկայ էին Առաքելական կազմը՝ նախագահութեամբ Տեառնեղբայր Յակոբոսի: Գործք Առաք. Գլուխ ԺԵ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.

"Առաքեալները, երեցներն ու եղբայրները՝ Անտիոքի, Սուրիոյ և Կիլիկիոյ մէջ ծնունդով հեթանոս եղող եղբայրներուդ ողջոյն կը յղեն: Բանի որ լսեցինք թէ ոմանք, իբրեւ թէ մեզմէ, որոնց մենք հրաման չենք տուած, վրդովեցուցած են ձեզ խօսքերով և խախտած են ձեր մտքերը՝ ըսելով որ պէտք է թշխատուիլ և պահել Օրէնքը, ... Հաճելի թուեցաւ Սուրբ Հոգիին և մեզ՝ աւելի ոչ մէկ բեռ դնել ձեր վրայ, բացի ... հեռու մնալ կուրճերու մատուցուած զոհերէ և արիւնէ և խեղդամահ եղած կենդանիներէ և պոռնկութենէ, լաւ կ'ընէք, եթէ ձեզ հեռու պահե՛ք ատունցմէ: Ո՞րջ եղէք" -- Գործք. ԺԵ. 28-29:

Հրեայ Բրիստոնէաներու վերոյիջեալ ազգայնամոլ մրցակցութիւնը շարունակուեցաւ անընդհատ և անդու: Որովհետեւ ոչ օրաթերթ, ոչ բատիոյ և

ոչ հեռատեսիլ կար: Մանաւանդ Առաքեալներու նախատակուելէն վերջ երբ իշխանական իրաւասութեամբ խօսող չի կար, Առաքելական գրութիւններու կարեւորութիւնը հետզհետէ զգալի դարձաւ:

ՄԱՐՍԻՈՆ ԿՈՌՎՄԻ ՄԷՋ

Մօտ հարիւր տարիներ անցած էին Յիսուսի յետ Յարութենէ, ու անա Պոնտոսցի Մարսիոն անուն եկեղեցական մը կը փասներ չոովմ 130-44 թուականներուն: Իր մասին մեր ունեցած բոլոր տեղեկագրութիւնները կը քաղենք իր հակառակորդներէն և զինք իբր հերձուածող դատապարտողներէն: Ըստ Պոնտոսցի Մարսիոնի՝ Հին Կտակարանի Աստուածը *արդարութեան* Աստուած էր որ *"Աչքի տեղ աչք և ակոռայի տեղ ակոռայ"* կը պահանջէր: Իսկ Յիսուս Քրիստոսի յայտնաբերած Աստուածը *բարի* Աստուած էր որ կը պատուիրէր. *"Եթէ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը զարնէ, մի՛ լսն ալ դարձուր անոր"*: Մարսիոն կ'ըսէր, "Ճշմարիտ Աստուածը յայտնաբանող Յիսուս, սխալ ճանչցուեցաւ բոլորին կողմէ և խաչուեցաւ: Մի միայն Պօղոս Առաքեալ խորապէս ճանչցած էր Յիսուս Քրիստոսը, սակայն ան ալ զոհ գնաց Հրեայ Քրիստոնեաներու մոլեռանդութեան:

Մարսիոն՝ ջանաց ըլլալ ջահակիրը Պօղոս Առաքելի և մաքրագործել Քրիստոնեական կրօնը ի նպաստ Նոր Կտակարանի միայն յաւելուածական և ներմուծուած գրուածքներէն: Մարսիոնի հայեացքով Հին Կտակարանը ոչ թէ հակընդդէմ է Յիսուսի Աւետարանին, այլ նաեւ հակադիր է ինքն իր մէջ: Մարսիոն՝ ինք անձամբ պատրաստեց Նոր Կտակարան մը որ կը պարունակէր Ղուկասու Աւետարանը և Պօղոս Առաքելին 10 նամակները:

Մարսիոն թէեւ կոչուած է հերձուածող և բանադրուած, սակայն ի՛նքը եղաւ Նոր Կտակարանի կանոնագրութիւնը հիմնարկող ռահվիրան և Ուղղափառ եկեղեցիներու միութեան նախապատճառը:

Մարսիոնի պատճառաւ, բոլոր եկեղեցիները միացան իրարու, կազմելու մէկ ճակատ որպէսզի բանադրեն Մարսիոն հերձուածողը: Որպէսզի կարենան Մարսիոնը դատապարտել, Ուղղափառ եկեղեցիները պարտաւորուեցան հաւաքել ցիրուցան եղած Առաքելագիր մատենագրութիւնները և կանոնագրել միայն անոնք որ պատմականօրէն ճանչցուած էին որպէս Առաքելագիր նամակներ:

Հիւսիսային Ափրիկէի Բարթէճ Բաղաֆի Տերտիլիանոս, հռչակաւոր աշխարհական աստուածաբանը, իր բոցակէզ հինգ գիրքերով ջանաց հերքել Մարսիոնի գաղափարները, սակայն ի զուր, որովետեւ Տերտիլիանոս՝ ի՛ր գրականութեամբ՝ անմահացուց Մարսիոնն ու անոր գաղափարները:

**ԻՆՉՈՒԻ և ԻՆՉՊԵՒՍ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՃՆՔԸ ԳԱՐՉԱԻ
ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ԳՃԻՃՆՃՆԻ և ՍՏԵՂԾՈՒԵՑԱԻ ՍՐԲԱԶԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻԻՆԸ.**

Բազմաթիւ անգամներ կ'իմանանք, *"Ինձի համար՝ Զրիստոնէութիւնը Ռակեդէն Կանոնն է":* "Հաւատքը" ինձի համար՝ *"Լեռան Զարոգութիւնն է":* *"Կրօնքին ջատ խորը մտնել սխալ է. խելիդ կը կորսնցնես":* "Պարզ Զրիստոնեայ ըլլալ, բաւ է":

Վերոյիշեալ բոլոր արտայայտութիւնները ուղիղ են, սակայն ո՛չ բաւարար և ո՛չ ալ արդարացուցիչ: Ինչպէս բոյս մը որպէս *ծիլ*, և անձնաւորութիւն մը որպէս *մանուկ* կը ծնին, նոյնպէս նաեւ Յիսուսի Եկեղեցին ծնաւ Պենտեկոստի օրը իր պարզութեամբ, սիրունութեամբ և համբուրելի տեսքով: *Ամէնքը միասիրտ, միատեղ էին*"--Գործք. Բ.1: Ի՞նչ մեծ ուրախութեամբ, ցնծութեամբ և հպարտութեամբ, երիտասարդ գոյգեր, տուն կը բերեն իրենց անդրանիկ զաւակը հիւանդանոցէն: Պատրաստ են ամէն զոհողութեան այդ հրեշտականման մանուկին համար որ հանդարտօրէն կը ժպտի: Մինչեւ որ այդ մանուկին անօթութեան ժամը հնչէ և սկսի ճջալ լալ և աղմկել:

Հայր և մայր կը սկսին ըմբռնել թէ այդ մանկիկը իրենց տան զարդարանքը չէ, այդ աղմկողը յախտնական երախայ պիտի չմնայ: Այդ մանկական դիմագիծով նորածինը ազգային հերոս մը կրնայ դառնալ: Այդ մանկիկը պիտի մեծնայ, պիտի հիւանդանայ, դպրոց պիտի երթայ, իր հոգեկան տեսիլքը իրագործելու համար տունէն պիտի բացակայի, դաստիարակուելու համար յաճախ պիտի յանդիմանուի և աշխատելու համար պիտի բրտնի: Մանկիկ մը մինչեւ իր չափահասութիւնը, միայն կաթով, համբուրուելով և ջորը փոխուելով չմեծնար, այլ՝ անոնց զուգահեռ կարիքը ունի մարմնական, հոգեկան և մտային դաստիարակութեան:

Նոյնպէս Եկեղեցին, իր սկզբնական ջրջանին պարզ էր, անզարդ և անմեղ, մանկիկի նման համբուրելի և հոգեհմայ: Մանուկ Եկեղեցին սկսաւ մեծնալ և հասակ նետել ու միայն կաթով (պարզ ֆարզութիւններով) չէր բաւականանար: Եկեղեցւոյ Եպիսկոպոսներու մէջ կային ոմանք որ ջանացին պահել Եկեղեցւոյ պարզութիւնը, իսկ ոմանք տեսնելով գալիք վտանգները (որոնք ոչ միայն մարմնական հալածանքներ էին, այլ իմացական), ձեռք գարկին *իմաստաւորելու* մանանեխածիլ հաւատքը:

Մատթէոս Աւետարանագիրը՝ միակ Առաքեալն է որ կ'արձանագրէ Յիսուսի վերջին պատուէրները Իր աշակերտներուն, ան կ'ըսէ. *"Յիսուս խօսեցաւ իր աշակերտներուն և ըսաւ, Ինձի տրուած է ամէն իշխանութիւն երկինքի մէջ և երկրի վրայ. ինչպէս Հայրը զիս դրկեց, էս ալ ձեզ կը դրկեմ* (առաքեալ կ'ընեմ): *Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէ՛ք բոլոր ազգերը: ... Սորվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը, ինչ որ*

պատուիրեցի ձեզի՝--Մատթ. ԻԸ, 18-20:

Յիսուս չպատուիրեց Իր աշակերտներուն երթալ ամբողջ աշխարհ և *հաճելի ճառախօսութիւններ ընել կամ միայն Բարոզել, այլ Ան ըսաւ, աշակերտ դարձուցէ՛ք՝ և "սորվեցուցէ՛ք անոնց":*

Երբ հայր մը իր չափահաս զաւակը վարպետ արհեստաւորի մը Բով դնէ, կ'ակնկալէ իր զաւկէն որ օր մը ա՛ն ալ ըլլայ վարպետ արհեստաւոր նման իր վարպետին: Երաժշտասէր պատանի մը երբ վարպետ ջութակահարի մը կ'աշակերտի, ինքն ալ կը դարձնայ ջութակահար:

Աշակերտ մը *ժամաղաճառութեան* համար վարպետի մը Բով կամ դպրոց չի յաճախեր: Ուսու՛մ ստանալու, գիտութիւն սորվելու կ'աշակերտի: Այգալոյս մը որքան ալ ըլլայ հրապուրիչ և գեղեցիկ իր լուսածածանջ արջալոյսով, հորիզոնին վրայ չի մ'նար, այլ՝ իր ոսկեղէն շողերը կը տարածէ օրուան ընթացքին որ հաց և կեանք տայ աշխարհի բնակիչներուն: Նոյնպէս Եկեղեցին՝ իր աղանձնման միամիտ և պարզ հորիզոնէն բարձրացաւ, որ կարենայ կեանք տալ համայն մարդկութեան և կարողանայ մ'նալ կանգուն, անխորտակելի և յարթական:

Պէտք է խոստովանիլ, որ անճառելի Մեծութիւնը և աստուածային անչափելի Բնութիւնը բնաւ կարելի չէ գիր և գրականութիւն դարձնել: *Պարու նակելի* և բովանդակելի դարձնել Զայն բառերու սահմանափակ հասկացողութեան ներքեւ: Անջուշտ ապրու՛մ մը իր զգայնութեամբ և իմացական զօրութեամբ բազում աւելի արտայայտիչ է քան թէ գիրը: Սակայն ինչպէս Յիսուսի և Առաքեալներու հրաշափառ և առիւնհող կեանքերը ապագայ սերունդին չի փոխանցուիր բերանացի կերպով, այլ միայն գրաւոր միջոցներով կը հասնի: Այդ պատճառաւ սուրբ Հայրապետներ վճռեցին *իմաստաւորել* Առաքելական Մատենագրութիւնը աստուածաբանական դաւանաբանութեամբ:

Ինչպէս անցեալին՝ նոյնիսկ այժմ, կարգ մը հաւատացեալներու խոտոր կը թուի Եկեղեցական Եպիսկոպոսներու սոյն արարքը: Սակայն իմ համետտ կարծիքով Սուրբ Եպիսկոպոսներու իրագործութիւնները թէ արդարացի էին և թէ այժմէական: Միայն կրնան սխալած ըլլալ իրենց գործադրութեան *եղանակին* և *կերպին* մէջ:

Նոր Կտակարանի աստուածաբանութիւնը՝ միաձոյլ և միակերտ վարդապետութիւն մը և հաւատոյ սկզբունք մը չէ եղած: Նոր Կտակարանի սկզբնական դարաշրջաններուն, իւրաքանչիւր Եպիսկոպոս և վարդապետ ազատօրէն կը բացատրէր Զրիստոնէական վարդապետութիւնը ինչպէս որ ձոգին առաջնորդէր զինք: Սոյն բազմազան գաղափարներն ու ըմբռնումները իրարու հաշտեցնել մարդկային ջանքերով տակաւին կարելի չէ եղած: Որովհետեւ նոյն բառերը տարբեր լեզուներու, տարբեր երկիրներու և աւանդութիւններու պատճառաւ, տարբեր *իմաստ* և նշանակութիւն կը պարունակեն:

Կանխագույն եկեղեցիներու կազմութեան ընթացքին, Նոր Կտակարանը գոյութիւն չունէր այնպէս ինչպէս մենք ունինք այժմ: Եկեղեցիները հաստատուեցան տարբեր Առաքեալներու միջոցաւ: Առաքեալներու առաջին գրութիւնները չորս Աւետարանները չէին, այլ, նամակները իրենց հաստատած եկեղեցիներուն և կարգ մը բացատրութիւններ և պատասխաններ ա՛յն հարցումներուն, որոնք ուղարկուած էին Առաքեալներուն: Հետեւաբար իւրա-
ֆանչիւր Եկեղեցի, Եպիսկոպոս և վարդապետ կ'ուսուցանէր այ՛ն վարդա-
պետական սկզբունքները զոր ի՛նք ըմբռնած էր՝ իր *հասկացողութեան*
կարողութեամբ, զիրենք այցելող Առաքեալէն:

Նոր Կտակարանը *մէկ Պատգամ* ունի և անոր աստուածայայտնութիւն ըլլալը անառարկելի է: Անոր *մտտեցումի՛ կերպը* միայն կը տարբերի հեղինակէ հեղինակ, որովհետեւ իւրաֆանչիւր Առաքեալի խորհրդագագացում-
ները կը տարբերին: Ինչպէս որ իւրաֆանչիւր անձի լսողութիւնը և կամ տեսողութիւնը կը տարբերին իրարմէ: Այս պատճառաւ Նոր Կտակարանի մէջ նամակներու և Չորս Աւետարաններու մէջ գրուած գաղափարներու, չ'ըսեմ դաւանանքներու, զանազանութիւններ կան: Մանաւանդ երբ բաղդատութեան դնենք Հին Կտակարանը՝ Նորին հետ:

Վերոյիջեալ պատճառաւ երբ որեւէ ընթերցուած կարդացուի Եկեղեցիներու մէջ, ժողովուրդը նստած կը մնայ, իսկ երբ Չորս Աւետարաններէն կարդացուիլ սկսի, ժողովուրդը ոտքի կը կանգնի որպէս յարգանք: Որովհետեւ Աւետարանները կը պարունակեն Յիսուս Զրիստոսի հարազատ և անխարդախ խօսքերը:

Ե՞Րբ Ե՛Ւ Ո՞Ր ԹՈՒԿԱՆՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԵՑԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐԸ

Առաքեալական *առաջին* գրութիւնները նամակներն էին, ուղղուած կարգ մը նորակազմ եկեղեցիներու: Յորդորելու զանոնք և բացատրելու անոնց Յիսուս Զրիստոսի դերը և պատուէրը այդ իւրայատուկ պարագաներուն: Նոր Կտակարանի նամակներուն մեծ մասը (13 նամակներ) գրուած են Պօղոս Առաքեալի կողմէ:

Պետրոս Առաքեալ գրած է երկու կարճ նամակներ:

Տեառնեղբայր Յակոբոս գրած է մէկ նամակ:

Յուդա Առաքեալ (ոչ մատնիչը) գրած է նոյնպէս մէկ կարճ նամակ մը:

Աւետարանագիր Յովհաննէս Առաքեալ գրած է երեք նամակներ և Յայտնութիւնը:

Հարցասէր մտքի մը համար բնական է գիտնալ թէ ե՞րբ գրուեցան Նոր Կտակարանի Գիրքերը: Որեւէ նամակ թուական չ'ունի: Նաեւ, մեր Բաղաճակրթեալ օրինաւոր թուականը՝ այդ շրջանին գործածական չէր, որովհետեւ մեր այժմու թուականը գործածութեան դրուեցաւ 1581 թուականին (Գրիգորեան օրացոյցով):

Պօղոս Առաքեալի տասը նամակները գոհացուցիչ կերպով կրնանք

Թուականել, սակայն մնացեալներուն թուականները՝ մօտաւոր կերպով կը հաշուենք: Նոր Կտակարանը իր բոլոր գրական վրիպակներով, ընդօրինակողներու սխալներով, թուականներու փոքր տարբերութեամբ, **Մուհամեմ-Մատելիօրէն կը գերազանցէ** ուրիշ բոլոր կրօններու կամ դասական մատենագրութիւններու թուականները: Ձմռանսմ նաեւ, որ **Մ. Գիրքը ամենագննելի քննութեան ենթարկուած և խուզարկուած մատենագրութիւնն է աշխարհի:**

Սուրատ իմաստասէր՝ ի՛նք եւս բնաւ գրութիւն մը չէ թողած իր իմաստասիրական որոնումներէն: Սուրատ ճանչցուած է աշխարհի՝ Պղատոնի գրութիւններով: Պղատոնի գրածքները որքա՞ն հարազատ նկատուելու է որպէս Սուրատի խօսք: Ճիշտ ո՞ր թուականին գրած է Պղատոն, յայտնի չէ: Նմանօրինակ դժուարութեան կը մատնուի նաեւ Ջրադաշտ և իր կրօնական գրականութիւնը: Ջրադաշտին ապրած իսկական դարն անգամ շփոթ է: Ումանք զինք կը դասեն 1000 ն. Ք. իսկ ումանք ալ 600 ն. Ք.:

Իսլամ կրօնի Աբ. Գուրանը որուն հեղինակութիւնը կը վերագրենք Մուհամէտ մարգարէին՝ մարգարէն ի՛նք չէ գրած: Մուհամէտ մարգարէն իր հոգեկան յափշտակութեան (trance) պահուն, արտասանած է Գուր'անի հատուածները իբր աստուածային յայտնութիւններ, և իր շուրջը գտնուող ասմուներող աշուղներ (արաբ. հաֆֆազներ) գոց ըրած են բոլոր իր արտասանութիւնները: Մուհամէտի արտասանած հատուածները, *40 տարիներ* յետոյ հաֆֆազներու (ասմուներող աշուղներու) կողմէ գրի առնուեցան Օսման Իպն Աֆֆանի խալիֆայութեան շրջանին մօտ 650 թուականին և կոչուեցան Գուրան:

Նոյնը կրնայ ըսուիլ նաեւ՝ Արեւելեան և Հնդկական սուրբ գրութիւններու մասին, որովհետեւ թուականները անյայտ են: Երբեք մոռնալու չէ որ դասական մատենագրութիւնները իմաստասիրական, թատերգական, բանաստեղծական և կրօնական բոլոր գրութիւնները որ այժմ ունինք, հեղինակներու ձեռագիրները չեն: Տասնեակ մը անգամներ ընդօրինակուած կամ տարբեր լեզուներէ թարգմանուած օրինակներ են: Համեմատական այս հայեացքով դիտելու և գնահատելու ենք նաեւ Նոր Կտակարանի մեզի հասած սրբազան գրութիւնները:

ԻՆՉՊԷՍ և ԻՆՉՈՒ ՍՏՈՒԳԵԼ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԳԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ՎԱԻԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ

Նախապէս յիշած էինք Նոր Կտակարանի կանոնագրութիւնը որ սկսաւ Մարսիոնի պատճառաւ մօտ 130 թուականին: Նոր Կտակարանի կանոնագրութիւնը յոյժ կարեւոր դեր կատարեց Եկեղեցիին միասնականութեան, իր դարաւոր պատմութեան աղէտալի շրջաններուն երբ բազմաթիւ աղանդներ սպառնացին իր գոյութեանը հինգերորդ դարուն: Յաջորդ դժբախտութիւնը

պատահեցաւ 11-րդ դարուն երբ Լատին Հռովմայ Եկեղեցին բաժնուեցաւ Արեւելեան Յունախօս Եկեղեցիներէն: Երրորդ *օգտակար* և նաեւ *վնասակար* փորձանքը տեղի ունեցաւ 16-րդ դարու բարեկարգութեան ցաւալի և ափսոսալի պարագաներու բերմամբ:

Երկրորդ դարուն կանոնագրուած Նոր Կտակարանը դարձաւ հիմնախարիսխը Եկեղեցիներուն՝ որոնք կառչած Նոր Կտակարանին, կարողացան գոյատեւել աննահանջ հաւատով և անխախտ հասնիլ մեր օրերուն:

Պենտեկոստէի օրը Սուրբ Հոգւոյն հրեղէն երեւումը՝ անկիւնադարձ մը կերտեց հաւատի հասկացողութեան հորիզոնին: Առաքեալներ այնուհետեւ ստացան իրենց հրահանգները ոչ թէ մեռեալ գիրէ կամ Օրէնքէ, այլ գործադրեցին այն ինչ որ Հոգի՛ն կ'առաջնորդէր: Այն Հոգին որ վաղ անցեալին կը ջարժէր ջուրերու վրայ, սկսաւ ջարժիլ աստուածակերտ մարդոց մէջ: Առաքեալները գործածեցին Հին Կտակարանի այն խօսքերը և մէջբերումները որոնք անուրանալի ապացոյցներ էին թէ Յիսուս՝ Քրիստոսն է, խոստացեալ և սպասուած Մեսիան:

Առաքեալները այլեւ ունէին Յիսուս Քրիստոսի անգերազանցելի կենդանի խօսքերը որոնք աւելի հեղինակաւոր և իշխանական էին քան Փարիսեցիներու և Օրինականներու Հին Կտակարանը: Առաքեալները սկսան իրենց Բարոզչութիւնը Յիսուսի՝ յաւիտենական և հոգեպարար խօսքերով և Անոր փառահեղ Յարութեամբ:

Երկրորդ դարու սկիզբը, Եկեղեցական Հայրապետներու մէջ կը գտնուէր Պապիաս (Papias of Hierapolis) անունով եպիսկոպոս մը որ ժամանակակից էր Պօղիկարպոսին, իմաստասէր Յուստինոսին, Գաղիոյ Իրենիմոս եպիսկոպոսին և Մարսիոնին: Այս ժամանակաշրջանին՝ 120-140 թուական, բերանացի աւանդութիւնները աւելի տպաւորիչ էին քան թէ գրաւոր պատուէրներն ու Բարոզչութիւնները: Հաւատացեալներ ակնկառոյց կը սպասէին Առաքեալներուն և անոնց յաջորդներուն որոնց **բերնէ՛ն** պիտի լսէին այն ոգեշունչ խօսքերը զորս Յիսուս Ինք խօսած էր: Հաւատացեալներու համար, Յիսուս վաղ անցեալի կամ Բան դարերու հեռաւոր և մոռցուած Անձնաւորութիւն մը չէր, այլ՝ Յիսուս իրենց յիշողութեանը մէջ *դրական և ներգործող* Իրակա- նութիւն դարձած էր:

Ըստ Եւսեբիոս (Eusebies) Եկեղեցական պատմահօր, Պապիաս (Papias) եպիսկոպոս որպէս մտաւորական անձնաւորութիւն, իր տրամադրութեան տակ ունեցած էր Մարկոսի, Մատթէոսի և Յովհաննու Աւետարանները, հաւանական կը կարծուի որ Ղուկասու Աւետարանն ալ տրամադրուած ըլլայ իրեն:

Պապիաս (Papias) ժամանակակից և ընկերակից եղած է Պօղիկարպոսի որ աջակերտած էր Յովհաննէս Առաքեալին: Պապիաս որպէս բանասէր ջարունակ զբաղ էր Աւետարաններու Բնական և բանասիրական աշխատանքներով: Բաղդաստութեան ենթարկելով իր Բովի Աւետարաններու օրինակները բոլոր անոնց հետ, որոնք ուղղակի Առաքեալներու բերնէն իմացած էին

Յիսուսի հրաշքներն ու գործունեությունը:

Մինչև 120-140 թուական՝ Պողոս Առաքելի գրած նամակները, մօտ 10 հատ միատեղ հաւաքուած, կը կարդացուէին եկեղեցիներու մէջ և հետզհետէ գերիվեր կը սեպուէին այս նամակները Հին Կտակարանէն: Անվիճելի է որ ջատ մը վարդապետներ գոց ըրած էին, թէ Պողոսի նամակները և թէ ալ Աւետարանները:

Յուստինոս վկան որ Զրիստոնէութեան Զատագովականը գրած և յղած էր Antoninus Pius կայսրին 150 թուականին, իր մօտ ունէր Յիսուսի խօսքերուն յուշագրութիւնները (memoir): Յուստինոս վկան ժամանակակից և ընկերակիցն էր Պապիաս Եպիսկոպոսին: Այս երկու հոգեկաւոր անձնաւորութիւնները Հոռոմ կ'ապրէին: Գնահատելի պիտի ըլլայ յիշել այս պահուն Յուստինոս Զատագովի վկայութիւնը Առաքելներու մասին.

«12 Առաքելները ապաւինելով Աստուծոյ զօրութեան ուղղութեան դէպի զանազան երկիրներ: Այս անուս և անգրագէտ աշակերտները Յիսուս Զրիստոսի՝ աստուածային զօրութեամբ և Ա. Հոգւոյն առաջնորդութեամբ Բարոզեցին և վկայակոչեցին իրենց Տէրն ու Փրկիչը ամէն ազգի և ժողովուրդի»:

Յուստինոս, ծնունդով հեթանոս, պաշտօնով իմաստասիրութեան դասախօս, հիացումով կը դիտէ Առաքելներուն իրագործած յաջողութիւնները երբ կը բարդատէ համեստ ձկնավաճառներու անվեհեր և խիզախ գործադրումները որոնք նոյնիսկ Կայսերական բանակներու անհնար եղած էին:

Կանացի վայելչութիւնն ու շնորհալիութիւնը, յիսուն տարիներ առաջ, ...36--23--34- մարմնական չափանիշներով չէր գնահատուեր: Կը նշմարէ՞ք, կ'ըմբռնէ՞ք թէ ներկայ մարդկային հետաքրքրութիւնն ու ջահագրգռութիւնը որքա՞ն մակերեսային և ծանծաղամիտ դարձած են այսօր:

Առաքելներու Բարոզչութեան արջաւը չկատարուեցաւ 20-րդ դարու հեռապատկերի լրագրողներու ներկայութեան կամ պետական պրոպականտի պիւետճելով: Յիսուս Զրիստոսի աշակերտներուն և Անոր հաւատարիմներուն առաքելութիւնը կատարուեցաւ Ա. Հոգւոյն ներթափանցումի զօրութեամբ Պենտեկոստէէն սկսեալ: Այս հանգրուանին՝ ոչ թէ կաւն ու հողը մարդացաւ, այլ մարդկային ինքնութիւնն ու ոգին, կամեցողութեան անձնաւորութիւնը՝ լուսաւորուեցաւ և դարձաւ աստուածամանութիւն:

Առաքելները ռահվիրայ նմոյշները դարձան աստուածային հրաշակերտութեան: Առաքելները ոչ միայն հրաշքներ և բժշկութիւններ գործեցին, այլ իրեն՝ հրաշքներն էին աստուածային սիրոյ, գթութեան և ողորմութեան: Առաքելներուն յաջողութիւնը *աւետումն* էր աստուածային լուսաճաճանչ այգալոյսին՝ թէ Աստուած Կամեցող է գործել մարդոց հոգիներուն մէջ: Այն Հեռաւոր կարծուածը դարձած է Մերձաւոր և անճանաչելին՝ Ճանաչելի:

Մենք եւս դառնանք հաւատաւորներն ու երկրպագուները այն Աստուծոյն

որ սիրած է մարդկութիւնը անսպառ սիրով: Որպէս ապացոյց Իր անպակաս ողորմութեան և անճառելի սիրոյն, դիտե՛նք Խաչեցեալի բազկատարած հրաւերը Իր գերագոյն գոհողութեամբ և նուիրումով: Նայի՛նք ու նշմարե՛նք Իր հաւատարիմ Առաքեալներուն, որոնք աներեր հաւատով եկան մինչեւ Արարատեան աջխարհ ու մեր պապերուն վկայակոչեցին իրենց Փրկչին Աւետարանն ու Փրկութեան բարի լուրը:

Ի տես այս անվեհեր մարտիրոսներուն և անվհատ նահատակներուն, խոնարհեցնենք մեր "ես"ը և լսենք Յիսուսի խօսքերը որ ըսաւ Թովմասի.

“Մի՛ ըլլար անհաւատ այլ հաւատացեալ”:

Նոյեմ. 10, 1989

Թորոնթօ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր Տերը Յիսուս Բրիստոս գրական աշխատանք չտարաւ, Իր Բարոզները գրաւոր չներկայացուց, մէկ անգամ միայն կը յիշուի իր գրած ըլլալը, և այդ ալ գետնի հողին վրայ: Յիսուս Բրիստոս խօսքով, քերանցի բարբառով ջանաց մօտենալ մարդ արարածին, խօսքի փոխանակութեամբ ներթափանցեց ու փոխակերպեց մարդկային հասկացողութիւնը և կենցաղակերպութիւնը:

Հրեայ՝ Ադեմասնդրիոյ իմաստասէր Ֆայլօ-ի համար, "խօսք"ը *Լոկոս* ոչ թէ Աստուած էր, այլ՝ Անկէ անշատ ինքնութիւն էր և ստեղծագործող Զօրութիւն: Առաքեալներու օրով աստուածային Խօսքը ո՛չ թէ Հնգամատեան Օրէնքին մէջ կը կայանար, այլ Բրիստոսի պատգամի՛ն մէջ (Գործք Ժ. 36-43) էր:

***«Վերածնա՛մբ ոչ թէ ապականացու սերմէ, այլ
անապական սերմէ՝ Աստուծոյ կենդանի և
մշտնջենական խօսքով»--Ա. Պետ. Ա. 23:***

Յովհաննու Աւետարանի նախաբանը Բիջ մը եւս յտաջ կ'երթայ և կ'անհատացնէ, կ'անձնաւորէ և կը մարմնաւորէ՝ աստուծային Խօսքը (Յով. Ա. 1-18) համարներուն մէջ, ուր առաքեալը կ'երգեհոնէ Յիսուս Բրիստոս, որպէս *"Աստուծոյ Խօսք"ը*, գրաբար՝ *«եւ Բանն էր առ Աստուած»:*

Յիսուս՝ Միածինն Աստուծոյ Իր մարմնացումով դարձաւ շօջափելի ու տեսանելի Աստուծոյ *«Նշօսք»* մարդկութեան համար: Բրիստոնէութիւնը, Աւետարանը, Յիսուս Բրիստոսի փրկագործութիւնը սկսաւ որպէս հոգեբուխ, հոգեղէն և հոգեպատում կրօն, հաւատք և ապրում, ու ո՛չ գրականութիւն:

***«Աստուած կարող դարձուց մեզ նոր ուխտի պաշտօնեաներ
ըլլալու՝ ոչ թէ գիրով, այլ հոգիով. Բանի որ գիրը կը սպաննէ,
բայց հոգին կը կենդանացնէ»--Բ. Կորնթ. Գ. 6:***

Հայր մը երբ փափաքի օրհնել իր զաւակը, բաղձանք մը կամ մաղթանք մը չի գրեր ու դներ իր որդւոյն գրպանը, այլ խօսքով *բժրանացի* իր շունչի՛ն գօրութեամբ օրհնութիւն կը մաղթէ: Սուկրատես ոչինչ փոխանցած է գրական ճամբով, միակ միջոցը ընտրած էր խօսքը:

Նախ Բան Արեւմտեան գրչագիրներու երեսումը, ամբողջ գրականութիւնը ոլորուած պապիրոսներու վրայ կը գրուէր ու կարելի չէր բոլոր գիրքերը մէկ *հատորի* մէջ կազմել: Արեւմտեան եկեղեցիներու գրչագիրները,

Նոր Կտակարանի գիրքերը կեդրոնացուցին և ներկայացուցին մեկ հատորի (գիրքի կազմութեան) մէջ: 1561-ին տպագրական հնարամտութիւնը, Յունարէն Նոր Կտակարանը կազմեց ու ներկայացուց զայն որպէս *միակտուր* գրութիւն՝ Biblos: Ոսկան Երեւանցին, 1666-ին Ամսթերտամի մէջ հրատարակեց առաջին ձայերէն Աստուածաշունչը:

Ընդհանուր առմամբ Նոր Կտակարանը Տիեզերական ժողովներու գործ մը չէր, այլ *աճուս* մը ու զարգացում մը՝ Եկեղեցիներու պահանջին պատասխանը: Յիսուս Զրիստոսի գործածած Աստուածաշունչ Մատենը, Հրեական Հին Կտակարանն էր, իսկ Պօղոս առաքեալին գործածածը՝ Աղեֆասնորիոյ Եօթանասնից հեղինակաւոր թարգմանութիւնը:

Ազգրնական դարու Եկեղեցական հայրերը զննեցին ու հետազօտեցին Հին Կտակարանը յատկապէս տեսնելու համար կատարումը Յիսուս Զրիստոսի Ծննդեան, Խաչելութեան և Յարութեան լրումը (յաւիտենական կեանքի խոստումը) -- Գործք Բ. 22-36, Գ. 12-36, Դ. 8-12: Մովսէս մարգարէ *Մտառայ* էր Աստուծոյ, մինչդեռ Յիսուս Զրիստոս՝ *Միածին Որդի*՝ էր Աստուծոյ -- Երբ. Գ. 5-6:

Հին Կտակարանի կանոնագրութիւնը գոցուեցաւ 90 թ. Յ. Տ.: Անոր կանոնականացուելու պատճառը, հրեաներու հելլենականութեան ձգտումն էր: Հրեայ ուսպիներ Հին Կտակարանի կանոնը գոցեցին Նախ 90-ական թուին, յետոյ 116-ին Jamnia-ի մէջ, ուր Հին Կտակարանի սրբազան գիրքերու ցանկին գումարը եղաւ 24: Նոր Կտակարանի գիրքերու կանոնականացման զադափարը, Բրիստոնեաներ, Հրեաներէն ընդօրինակեցին:

Ենովքի մարգարէական գիրքը կանոնական կը սեպուէր Բարնաբասի և Տերսիւղիանոսի կողմէ մինչեւ որ Ս. Օգոստինոս և Ս. Հերենիմոս պարականոն անուանեցին զայն: Եզրասի մարգարէական գիրքը կանոնական կը համարուէր Ամպրոզիոս եպիսկոպոսի կողմէն, սակայն Ս. Հերենիմոս զայն անուանեց ցնորամիտ գրութիւն մը:

Հրեական Հին Կտակարանը կանոնական ճանչցուած էր բոլոր Ուղղադաւան Եկեղեցիներու կողմէ առաջին իսկ դարուն: Միայն հերձուածողներ կը մերժէին Հին Կտակարանի կանոնականութիւնը, որոնց մէջ նշանաւոր դարձաւ Մարսիոն եպիսկոպոս և Կնոստիկեան աղանդաւորները 2-րդ դարուն: Մարսիոն և կնոստիկեաններ կը հաւատային, որ Հին Կտակարանի ծիսական Աստուածը կը տարբերի սիրոյ և փրկագործչական Նոր Կտակարանի բարեգութ Աստուծմէն:

Մարսիոն եպիսկոպոս անջատեց իրեն հաւատացողներու եկեղեցին 144 թուին և սկսաւ նոր յարանուանութիւն մը, որ տեսեց մինչեւ իններորդ դար Բիւզանդական Եկեղեցւոյ մէջ, և յետոյ Հայաստանի մէջ ալ: Կը կարծուի թէ իր վարդապետութիւնը ազդեցութիւն ներգործած է Հայաստանի մէջ Թոնդրակեցւոց շարժումին:

Միջին դարու կաթոլիկ աստուածաբաններ, սրբազան գրութիւններու մէջ

փնտոեցին չորս զանազան իմաստներ.

ա. գիրը կը սորվեցնէ *պատճառաբան*՝ դէպքեր և իրողութիւններ:

բ. այլաբանութիւնը, *ի՞նչ հաւատալու է*:

գ. բարոյական իմաստը՝ *ի՞նչ կենցաղախօսութիւն* ունենալու է հաւատացեալ մը:

դ. խորհրդաբանական նշանակութիւնը՝ *ինչի՞ պէտք է յուսալ*.

Օրինակ

ա. "Երուսաղէմ" բառը, *բառացիօրէն* կը նշանակէ ձրէաստանի «մայրաքաղաքը»,

բ. *այլաբանականօրէն* կը նշանակէ Եկեղեցին,

գ. *բարոյականապէս* «օրէնսդրուած» հանրապետական երկիր մը:

դ. *խորհրդաբանականօրէն* «փրկուածներու» երկնային բնակարան:

1519-ին Մարթին Լուտեր մերժեց Եկեղեցական և աւանդական հեղինակութիւնը և նկատի առաւ միայն Ա. Գիրքին (Հին և Նոր Կտակարաններու) գերագոյն իշխանութիւնը (Մարկ. Է. 13-14) և անխուսափելի կերպով բաժնեց Բողոքականութիւնը Կաթոլիկ Եկեղեցիէն: Ան մոռցաւ, որ Աստուածաշունչ գրքի գերագոյն հեղինակութիւնն ու աստուածայայտնիչ ստուգանիշը *որոշող և հաստատող* վարչական կազմը՝ ի՞նք Եկեղեցին ու եպիսկոպոսներու աւանդութիւններն էին:

Մարթին Լուտեր, թէեւ բարձրացուց Աստուածաշունչի հեղինակութիւնը բոլոր նախընթաց Եկեղեցական ժողովներէ աւելի, սակայն ի՞նք նոյն հեղինակութիւնը և իրաւասութիւնը չտուաւ Աստուածաշունչի բոլոր գիրքերուն: Ան նախապատուութիւն ընծայեց՝

ա. Չորս Աւետարաններուն:

բ. Գերագոյն պատգամը գիրը չէ, այլ հոգին. «*Զանի որ գիրք կը սպաննէ, բայց հոգին կը կենդանացնէ*»
--Բ. Կորնթ. Գ. 6

գ. Հին Կտակարանը կը կարօտի նոր Կտակարանի հոգեկան բացատրութեան: Ամբողջ Հին Կտակարանը պարտ է մեկնաբանուիլ Նոր Կտակարանի լոյսով--«*Թող տուէ՛ք Մովսէս մարգարէն իր ժողովուրդին հետ ... մենք Աւետարանները ու նիւթ*»--Մարթին Լուտեր:

Բարեկարգիչներէն, Չուիցերիոյ Չուիսկլի ըսած է.

ա. "Յիսուս Թրիստոս համահաւասար է Հին Կտակարանի մարգարէներուն, որոնք յայտնաբանած են զԱստուած":

բ. "Չուիսկլի կը հաւատար թէ Պղատոնի և Սէնէգայի կարգ մը գրութիւնները Ա. Հոգւոյն առաջնորդութիւններ են:

գ. 1527-ին Չուիսկլի ընդունեց նոր Կտակարանի գերակայութիւնը Հին Կտակարանի վրայ:

Ճոն Գալվին Աստուածաշունչի գիրքերու խորականութիւն չդրաւ, այլ բոլորը հաւասար կերպով ներշնչուած ընդունեց: Ան շատ զօրաւոր կերպով հաւատացողն էր *նախասահմանական* (predestination) վարդապետութեան: Մարդասէր (humanist) Ռոթէրտամի Էրամոս (1466-1536) 16-րդ Դարու բացառիկ դէմքերէն մէկը հանդիսացաւ: Իր յունարէն Նոր Կտակարանը ցոյց տուաւ Ս. Հերոնիմոսի Վուլկաթա թարգմանութեան անբաւարարութիւնը և դուռ բացաւ Աստուածաշունչի *Բնական*, ուսումնասիրութեան:

16-17 դարերու ընթացքին, Հին Կտակարանի ազդեցութիւնը շատ զօրաւոր եղաւ, մասնաւորապէս Անգլիոյ մէջ, Ճոն Գալվինի պատճառաւ: ա. Աստուածաշունչի *տառացի* ներշնչումը՝ վարդապետութիւն դարձաւ: բ. Իբրեւ թէ Աստուած Ս. Գրքին իւրաքանչիւր բառը թելադրած կամ հրամայած էր:

18-րդ դարը Աստուածաշունչի *Բնական* դարը դարձաւ:

19-րդ դարուն մէջտեղ ելան կրօնական *հիմնապաշտներ*, որոնք ջանացին կասեցնել Բնական հետազօտութեան ծայրայեղութիւնները:

Քրիստոնէական սկզբնական գրութիւններու հաւաքածոն մեծարուած էր Եկեղեցիներու մէջ ու կը կարդացուէր Ս. Պատարագի ընթացքին որպէս առաջնական և հեղինակաւոր հաւատամբ: Նոր Կտակարանի կանոնագրութիւնը հիմնական հանգրուան մըն է քրիստոնէական պատմագրութեան մէջ: Նոր Կտակարանի կանոնագրութիւնը օգնեց Եկեղեցւոյ միասնականութեան և տիեզերականութեան: Մինչեւ Բ. դարու վերջերը, Եկեղեցիներու միջեւ համաձայնութիւն մը գոյացած էր Չորս Աւետարաններու, Գործք Առաքելոցի և Պօղոսի նամակներուն (բացի Եբրայեցւոց. Ա. Յովհաննու, Ա. Պետրոս, Յուդայի և Յայտնութեան գիրքերու) մասին: 4-րդ դարուն վերջը Նոր Կտակարան գիրքերուն ցանկը անփոփոխելիօրէն վճռուած էր թէ՛ Յոյն և թէ՛ Լատին Եկեղեցիներու կողմէ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՇՐՋԱՆ (մինչեւ 70 թուական)

Քրիստոնէական Եկեղեցին սկզբնական օրէն ժառանգորդը հանդիսացաւ թանկագին և սրբազան գրականութեան՝ Հին Կտակարանին: Յիսուս Քրիստոս ընդունած էր Սրբազան գրութիւնները որպէս ճշմարիտ, սակայն ոչ որպէս աստուածային *գերագոյն* յայտնութիւնը (Մատթ. Ե. 17).

«Աի՛ կարծե՛ք թէ Օրէնքը կամ մարգարէները ջնջելու եկած եմ, չեմ եկած ջնջելու, այլ՝ լրացնելու.»

վերոյիշեալ պատգամէն յետոյ Յիսուս Քրիստոս կը յայտարարէ.

«Լսած է՛ք թէ ի՛նչ ըսուած է նախնիքներու ն. "Աի՛

սպաններ՝ . . . “Բայց ես կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մարդ որ գուր տեղը կը բարկանայ իր եղբօր, ենթակայ պիտի ըլլայ դատաստանի» --Մատթ. Ե. 21:

Հին Կտակարանի բոլոր մէջքերումները, որոնք կ'երեւին Նոր Կտակարանին մէջ, առնուած են ոչ թէ Երուսաղէմի Հրեական գիրքերէն, այլ 70-նից յունարէն թարգմանութենէն: սկզբնական դարուն, եկեղեցին ինքզինքը գտաւ դարաշրջանի մը մէջ, որ յայտնաբանական, վախճանական և ջատագովական գրականութեամբ լեցուն էր--Ա. Կորնթ. ԺԲ. 4-11: Այ-Հրեայ Բրիտաններ, առաջին հերթին, թանկագին կը համարէին և բարձրագոյն արժէքը կու տային *Յիսուսի* խօսքերուն և պատուիրաններուն:

«Յիզել Տէր Յիսուսի խօսքը, գոր Ինք իսկ ըսաւ *Երանելի՛ է մանաւանդ տալը քան առնելը՝* --Գործք Ի. 35:

Սոյն հոգեկան առաջնորդութիւնը դէպի Յիսուս Բրիտանի խօսքերուն և պատուիրաններուն, սկիզբը գրաւոր կերպով չէր շեջտուած, բայց բերանացի նշուած էր բոլոր եկեղեցիներու մէջ: Առաքեալներու Բարոգութիւնը իմաստասիրութիւն, Բաղաբանութիւն, կրօնական օրէնսդրութիւն մը չէր, այլ Յիսուս Բրիտանի Աւետարանը՝ Անոր կենսաւորիչ խօսքերն էին. *«Տէ մէկ մարդ երբեք խօսած է այնպէս, ինչպէս այն մարդը»*--Յով. Ե. 46:

Առաքեալներու կողմէ Բարոգուած Յիսուսի խօսքերը, *կանախէն* խոր տպաւորութիւն ներգործած էին բոլոր հաւատացեալներու մտքին մէջ նախ քան անոնց արձանագրութիւնը որպէս *գրաւոր*: Աւետարաններ: Չորս Աւետարանները, որպէս բերանացի ասութիւններ, գործածական էին բոլոր եկեղեցիներու մէջ:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱՅՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿԹԻՒՆ (70-150)

Յիսուս Բրիտան՝ Ինք որեւէ գրութիւն չթողուց Իր ետին, բացի գետնի հողին վրայ գրածը: Կանխագոյն առաքելական գրութիւնները Պօղոս Առաքեալի նամակ թուղթերը եղած են:

Վերոյիշեալ գրութիւնները պատասխաններն էին Պօղոս առաքեալի ուղղուած կարգ մը եկեղեցական իւրայատուկ հարցումներուն: Սոյն նամակները գրուած չէին կարդացուելու համար *բոլոր* եկեղեցիներու մէջ որպէս հեղինակաւոր պատուէրներ: Սոյնիսկ Պօղոս առաքեալ Ինք այդ մտածումով չէր գրած զանոնք: Մի միայն Հռոմայեցւոյ եկեղեցիին ուղղուած նամակը կրնայ ընդհանրական հաւատացեալներու ուղղուած ըլլալ, զանոնք կազմակերպելու և հաւատքի մէջ հիմնաւորելու համար:

Ինչո՞ւ եկեղեցին ընդունած է ու ճանչցած միայն Չորս Աւետարանները փոխանակ Մէկ Աւետարանի, և ինչո՞ւ միայն չորս Աւետարաններ, երբ

գոյութիւն ունէին զանազան և բազմազաղափարական աւետարաններ:

Նոր Կտակարանի կարգ մը բաժանումները՝ "Չորս Աւետարաններ"ը, 2-րդ դարուն, թարգմանուած էին Ասորերէնի (այս ապացոյց է, որ Նոր Կտակարանը՝ թէեւ համեստ վիճակով, գոյութիւն ունէր երկրորդ դարուն): Տաշեան Ասորիի Չորս Աւետարաններու համացոյց խմբագրութիւնը (Diatessaron), 2-րդ դարու կէսին, արդէն իսկ, գործածական էր Ասորական եկեղեցիներու մէջ:

Դժբախտաբար այս աստուածաբան մտաւորականը, իր նախանձորդներու կողմէն, որպէս աղանդաւոր անուանարկուելով հալածուած և Չորս Աւետարաններու խմբագրած "համացոյց" թանկագին գրութիւնը այրուած է: Տաշեան, ծնունդով եղած է Ասորի և հետեւող Յուստինոս իմաստասէր վկային:

2-րդ դարուն Չորս Աւետարաններու միաւորումը ընդունուած իրողութիւն էր համայն եկեղեցիներու մէջ, բացի Ասորական եկեղեցիներու, ուր Տաշեանի համացոյց (չորս Աւետարաններու միացումը) կը տիրապետէր փոխանակ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս Չորս անձնայատուկ Աւետարաններուն:

2-րդ դարու Բաբայաս եպիսկոպոս (135-140) աւելի կարեւորութիւն կ'ընծայէր անգիր՝ բերանացի վկայութիւններուն քան թէ գրաւոր: Այգքնական դարերուն, հաւատացեալներու համար աւելի խիստ ոգեւորիչ և հոգեկան ներշնչում կը պատճառէր իմանալ առաքելական վկայի մը բերնէն Տիտուս Զրիստոսի անապական, կենսամղիչ ու տեսական խօսքերը քան թէ գրաւոր աւետարանի ընթերցումը: Իրէնիմոս եպիսկոպոս Բաբայաս աստուածաբանը կը կոչէ "գործակից"ը Պօղոսկարպոսին: Բաբայասի վկայութիւնը Զրիստոսի արտայայտութեան մասին, կ'ըսէ.

«Կը նախընտրեմ իմանալ կենդանի խօսողի մը բերնին և հոգիին վկայութիւնը, քան թէ կարդալ և իմանալ սոյն վկայութիւնը գիրքերէ»:

ՎԵՂ ԵՒ ԻՇԻԱՆԱԻՈՐ ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Կանոնական Չորս Աւետարանները, 2-րդ դարու նուիրեալ և անձնագոհ Բրիստոնեաներու եզրահանգումն էր:

Ս. Մարկոսի Աւետարանը առաջին Աւետարանն է որ կը կարծուի գրուած ըլլալ Հռոմի մէջ յետ Ներոն կայսրի հալածանքներուն, մօտ 64 թուականին: Ճատ տարիներ չ'անցած Ս. Մարկոսի Աւետարանը իր լման հեղինակութեամբ կ'արտասպուի Մատթէոս առաքեալի կողմէ Պաղեստին բնակող Հրեաներու համար: Մատթէոս առաքեալ կը ճոխացնէ Մարկոսի խտացեալ Աւետարանը, յիշելով իր Վարդապետին այն մանրամասնութիւնները, ինչպէս "Լերան Զարոգ"ը, որոնք գրաւիչ պիտի դարձնան և համոզեն իր Հրեայ ազգը:

Ղուկաս աւետարանագիր եւս ընդարձակելով Ս. Մարկոսի Աւետարանը կը

կցե յաւելեալ դէպքեր և ասութիւններ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի, որոնք չէին յիշատակուած Մատթէոս առաքեալի և Մարկոս աւետարանագիրի կողմէն: Ղուկաս աւետարանագիր գրած է թէ՛ Երրորդ Աւետարանը և թէ Գործք Առաքելոց պատմութիւնը Արեւելեան Միջերկրականի Բաղաճներէն մեկուն մէջ Առաջին դարու վերջաւորութեան: Ղուկաս բժիշկ՝ իր յառաջաբանին մէջ որոշ կերպով և յայտնապէս կ'ըսէ.

«Շատեր ձեռնարկեցին ջարարող մեր մէջ կատարուած դէպքերու և պատմութիւնը, ինչպէս մեզի աւանդեցին անտե՛ որ սկիզբէն ականատեսներն ու սպասաւորներ (առաքեալներ)՝ Նդան խօսեցին»--Ղուկ. Ա. 1-2:

Վերոյիշեալ յառաջաբանը ուշագրաւ է անով, որ անոր հեղինակը կ'ընդունի զանազան գրաւոր աւետարաններ, որոնք գործածական էին զանազան հաւատացեալներու կողմէ: Ղուկաս աւետարանագիր ո՛չ կը շեշտէ Աւետարաններու իշխանութիւնը և ոչ ալ կ'ուրանայ անոնց հեղինակութիւնը: Յովհաննու Աւետարանի կեդրոնական համարը կամ պատգամ բանալին կը գտնուի անոր Ի. գլուխ և 30-րդ համարին մէջ, որ կ'ըսէ.

«Յիսուս իր աշակերտներու և առջեւ ուրիշ ջատ նշաններ ալ ըրաւ, որոնք գրուած չեն այս գրքին մէջ: Այլ՝ ասիկա այն չափով գրուեցաւ, որպէսզի դուք հաւատա՛ք թէ Յիսուս՝ Զրիստոսն է, Աստուծոյ Տրոյին: Եւ ա՛յ՝ որպէսզի հաւատա՛ք ու յա՛խտենական կեանք՝ ընդունի՛ք անոր անու նով»:

Չորրորդ աւետարանագիր Յովհաննէս առաքեալ, նկատելով իրմէ առաջ գրուած Աւետարաններու պատմական հանգամանքը, կը ձեռնարկէ *խորհրդաբանական* ու հայեցողական մօտեցումով ներկայացնել իր Տէրն ու Վարդապետը յոյն իմաստասէր մտածողութեան, որովհետեւ "սիրելի" աշակերտին համար, Յիսուս Զրիստոս յաւերժաւանդ *խորհուրդ* է:

*«Հօրմէն անբաժանելին մտաբին մէջ կը ծնի ...
Երկինքի և երկրի մէջ անբաւելի աստուածութիւնը
Խանձարուրի մէջ կը փայթի»* իս--Շարական:

Յովհաննէս առաքեալ աստուածաբանական մօտեցումով կը մեկնաբանէ իր Տէրը՝ Աստուածնորդին, որպէս "Բանն Աստուծոյ": Երկրորդ դարու սկզբնաւորութեան, եկեղեցիներու տրամադրութեան ներքեւ կային բազմաթիւ և այլազան աւետարաններ, ոմանք գրուած առաքեալներու կողմէ և ուրիշներ ալ, որոնք գրուած էին որպէս վիպագրական և երեւակայական պատմութիւններ:

Սակայն այդ բազմադիմի աւետարանները իրենց պարունակութեամբ և հեղինակութեամբ երբեք չէին հաւասարեր վեհագոյն և հմայագեղ ներկայ աստուածաշնչական Չորս Աւետարաններուն:

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ

Պարականոն աւետարանները (ոչ-կանոնագրուած) թէև ջրջաբերութեան մէջ եղած են սկզբնական դարերուն, սակայն անոնք չունին և չեն հաղորդեր յաւելեալ տեղեկութիւններ և ներուժ հաղորդումներ Յիսուս Զրիստոսի անբասիր ապրումին աննախընթաց հրաշագործութիւններուն և հմայագեղ Յարութեան մասին: Պարականոն աւետարան կոչուած գրութիւններու մեծ մասը՝ հատուածներ են փոխ առնուած կանոնագրուած Չորս հեղինակաւոր Աւետարաններէն, կամ հեղինակութիւններն են կարգ մը աղանդաւորներու, որոնք ջատագովները եղած են իրենց թիւր վարդապետութիւններուն և կը ջանան յարգելիութեան պատմուճան հագուիլ:

Կնոստիկեան և Տոսեդիկեան եկեղեցիներու առաջնորդներուն գրած Աւետարանները, կը ջանան ներկայացնել մեր Տէր Յիսուս Զրիստոսը ո՛չ թէ *Մարմնացեալ* Աստուած-Որդին, այլ՝ *երեսու թաղան մարգարէ* մը, որուն ջնորհուած էր Աստուած-որդիութեան *հանգամանքը*: Որովհետև վերոյիջեալ աղանդները չէին կրնար հաւատալ, թէ Ոգեղէն Աստուծոյ Միածին Որդին կրնայ *մարմնանալ*: Սոյն աղանդաւորներուն համար *“մարմին”ը* մեղանչական կը սեպուէր, ուստի աստուածային Մրբութիւն մը կարելի չէ որ *մարմնանար*:

Յովհաննէս աւետարանագիր այսպիսի աղանդամուղներու դէմ է որ գրած է թէ՛ իր Աւետարանը (չորրորդ) և թէ՛ իր նամակը (Ա. Ընդհան. նամակը, ուր ան կ'ըսէ.

«Ան որ սկիզբէն էր, որուն մասին լսեցինք, որուն ականատես իսկ եղանք, որուն նայեցանք, և մեր ձեռները ջօջափեցին կենաց բանը»--Ա. Յով. Ա. 1:
«Սկիզբէն էր բանը, և Բանը Աստուծոյ Բով էր... և Բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ, և

մենք տեսանք անոր փառքը, որպէս ջնորհով և ճշմարտութեամբ լի միածնի փառք՝ ստացուած Հօրմէն»--Յով. Ա. 14:

Պարականոն գանազան աւետարանները երեւակայական պատմուածքներ են Յիսուսի մանկութեան և պատանեկութեան ջրջանի, որոնք լուսանցփի մէջ ձգուած էին Չորս Աւետարաններուն մէջ: Մոռնալու չենք, որ այդ ջրջանին ալ գտնուեցան *գրական* մարդիկ, որոնք ազատութիւն տուին

իրենց երեւակայութեան, գրել հաճելի կամ հետաքրքրական վէպեր Յիսուս Զրիստոսի կարծեցեալ կեանքի և ապրումի մասին, ինչպէս ներկայ դարու շարժապատկերներու հեղինակները ... :

150-200 թուականներուն, եկեղեցիները մատակարարուած էին ճոխ ու հարուստ բազմաթիւ և այլազան վաւերագրական գրականութեամբ՝ Աւետարաններ, նամակներ, ջատագովական երկեր, թէ՛ առաքեալներու հեղինակութեամբ և թէ՛ ալ ճանաչում փնտրող և վախճանական մարգարէութիւններ գրող եսամոլներով:

Վերոյիջեալ պատմական և ճշմարիտ գրութիւնները գործածական կը դառնային կարգ մը եկեղեցիներուն կողմէ, իսկ մեծ մասը լուսանցքի (շուքի) մէջ մնալով հետզհետէ կ'արժեքագրուէին իրենց հոգեշունչ կարծուած հաւակնոտութենէն: Եկեղեցիներու կողմէ գործածական Չորս Աւետարաններն ու Նոր Կտակարանի նամակներն իսկ իրենց գործածական վիճակին մէջ, չէին ընդունուած որպէս *սյրբազան գրութիւններ*, և ոչ իսկ համահաւասար սեպուած Հին Կտակարանին բաղդատմամբ: Եկեղեցիներու մէջ և հաւատացեալներու ամենաշատ սրտագրաւ և հոգեմայ խօսքերը՝ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի բերնէն ու հոգիէն բխած խօսքերն էին, ըլլան անոնք բերանացի կամ գրաւոր: Վեհիմաստ և խորագոյն յարգանքը և երկրպագակա՛ն հաւատքը կ'ընծայուէր Փրկիչ Զրիստոսի *խօսքերու* ն:

Բոլոր Առաքելական (Յոյն, Կաթողիկէ և սկզբնական) եկեղեցիներու մէջ, բացի Բողոքական (Աւետարանական, Ակրտական կամ Հոգեւոր եղբայրութիւններու), երբ կարդացուի Չորս Աւետարանները, բոլոր ժողովուրդը ուժի կը կանգնի: Ինչո՞ւ, որովհետեւ Չորս Աւետարանները կը պարունակեն մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի անապական խօսքերը: Սոյն յարգանքը ապացոյց է, որ Աւետարանները առաջին մէկ օրէն հմայագեղ ներագդեցութիւն մը թողած էին ունկնդիրներու վրան:

Առաքելական և Բրիստոնեայ մարգարէներու հեղինակութիւններն ու իրաւասութիւնը համրաբար տեղ կը գրաւէին հաւատացեալներու սրտերէն ներս նոյնիսկ առաջին դարը չվերջացած: Պօղոս առաքեալ իր գրութիւններուն մէջ կ'ըսէ.

«Արդ, կ'աղաչեմ ձեզի, նմանո՛ղ եղէ՛ք ինձի»

--Ա.Կորնթ. Դ. 16:

Այս հեղինակութեան և իշխանութեան համար է, որ Եկեղեցիներ իրենք զիրենք կոչեցին. *«Առաքելական»*, որ կը նշանակէ հիմնուած առաքեալներու հաւատքին, կեանքին և ուղղափառ վարդապետութեան վրայ:

«Ստար և պանդուխտ չէ՛ք, այլ՝ Բաղաճացիներ սուրբերու ն և Աստուծոյ ընտանիքէն, ջինուած առաքեալներու և մարգարէներու հիմին վրայ, որու ն անկիւնաճարն է Զրիստոս Յիսուս»--
Եփես. Բ. 19-21:

Մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի անփոխարինելի Մարդեղութիւնը և փրկագործչական ապրումը, Խաչելութիւնը, մեռելներէ Յարութիւնն առնելը և առաքելներու եկեղեցիներու կառուցումը կամրջող պատմագիր ճարտարապետը եղած է Ղուկաս բժիշկ անտարանագիրը, որ հեղինակն է նաեւ Գործք Առաքելոց գրքին:

Առաքելական գրութիւններու մէջ անհերքելիօրէն նկատելի է, որ Յիսուս Բրիստոս Ի՛նք կը խօսի և Ի՛նք կը գործէ: Յաւերժաւանդ Մարդեղեալն է սիրական Հեղինակը և ներշնչող Հոգին, որ ուղղութիւն կու տայ առաքելներու գրչին:

Օրինակ. Պօղոս առաքել՝ իր յոգնասպառ անտարանչական ու ժրաջան աշխատութենէն յետոյ կը գրէ Տիմոթէոս իր սիրելի երիտասարդ գործակիցին ըսելով.

«Ի՛նչ Տիմոթէոս, պահէ՛ աւանդը, հետու մնայով նորելուկ պիղծ վարդապետութիւններէ, հակառակութենէ և խաբեպատիր գիտութենէ՝ զոր ոմանք, յանձն առնելով, շեղեցան հաւատէն» --Ա. Տիմ. 2. 20:

Վերեւ գրուած *«Պահէ՛ աւանդը»* կը նշանակէ.

1. «Աստուածային յանձնարարութիւնը»--J. B. Phillips
2. «Հաւատքի երաշխիքը»--J. Moffatt
3. «Զայն որ վստահուած է բու խնամքիդ»--C. I. Scofield
4. «Պահեա զաւանդն»--Գրաբար:

Վերոյիշեալ հասուածները կը ստիպեն մեզ հաւատալ, որ առաքելներու կողմէ Բարոզուած կամ գրուած խօսքերը պատուերներ, յորդորներ, և խրատներ են յանձնարարուած և ուղղուած ընդհանրական եկեղեցիներուն իրագործուելու համար հաւատացեալներու կեանքին մէջ: Ուստի, չկայ Հայկական ինքնութիւն առանց Բրիստոնէական հաւատքի, Եկեղեցիի և աւանդական կառոյցներու:

Առաքելալը "կոյր աւանդապաշտութիւն" կամ անխորհուրդ մղեռանդութիւն չյանձնարարեր, այլ աւանդուած հարազատ և անխարդախ խօսքերը Յիսուս Բրիստոսի: Եկեղեցին դառնալու չէ՝ միայն *աւանդեալ հաստատութիւն* մը, այլ հոգին կենսաւորող *ուժ* և *ջարժում*:

Աւանդութիւնը՝ բիւրեղացումն է դարերու իմաստութեան և փորձառութեան, որուն անգիր մատենանին մէջ պահուած կը մնան տարիներու դրուագները: Նոր Կտակարանի մէջ չկայ առասպել, կայ աւանդեալ *հաւատք*, չկայ բառախաղ, կայ *համոզում*:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆԽԱԳՈՅՆ ՎԿԱՆԵՐԸ

1.-Կղեմէս Աղեփսանդրացին (150-213 թ.) Բրիտանացի պապականության, Որոգինէս աստուածաբանի դաստիարակը, եկեղեցականներու հաւանութեամբ ամենագրաւիչ դեմքը Բրիտանական պատմութեան: Կղեմէս, ինչպէս իրմէ յետոյ ալ իր աշակերտ՝ Որոգինէս, յայտնաբանուած բերանացի ու գրաւոր հաւատամքներու և հանգանակներու ընդմէջէն կոչ կ'ընէ Նոր Կտակարանի կազմաւորման: Ան տիրական վկան եղած է որ Նոր Կտակարանը իր էական իսկութեան մէջ հասցնէ անոր լրումին:

Կղեմէս Աղեփսանդրացիի դարձը դէպի Բրիտանեկութիւն տեղի ունեցած է նման հարազատ իմաստասէրի մը ճշմարտութիւն պրպտելու ընթացքին, երբ կը սերտէր Պետրոսի, Յակոբոսի, Յովհաննէսի և Պօղոս առաքեալներու գրութիւնները, օգնութեամբ Տաշեան Ասորիի և Փանթէնուսի: Կղեմէս Աղեփսանդրացին՝ իր գրական մէջբերումներուն մէջ՝ Չորս Աւետարանները կը կոչէ. *«Արքազան յիշատակագիրներ»*:

Կղեմէս Աղեփսանդրացիի ժամանակակից եղող Յուստինոս վկան, (ծնած 100 թուին), Չորս Աւետարանները կը նկատէ որպէս գերագոյն յիշատակարանները սուրբ առաքեալներուն: Ան կը վկայէ նաեւ, թէ Չորս Աւետարանները սկիզբէն ի վեր կը կարդացուին զուգահեռօրէն Հին Կտակարանի մարգարէութիւններու կարգին (Apol. M. 67): Յուստինոս կը լուսաբանէ և կը շանայ համոզել իր հակառակորդները, թէ Աւետարաններն են իր հաւատին և գիտութեան ակնաղբիւրը, որոնց միջոցաւ ինք ճանչցած է Յիսուս Զրիստոսը, և որոնք կը կարդացուին Հրեայ մարգարէութեան հետ ծիսական արարողութիւններու ընթացքին:

ՄԱՐԿԻՈՆ ԿԱՄ (ՄԱՐԿԻՈՆ 85-180)

Որ թէպէտ կոչուեցաւ աղանդաւոր ու եղեղեցիին կողմէ բանադրուեցաւ, սակայն ունեցաւ իր *դրակն* օգտակարութիւնը Նոր Կտակարանի հաւաքումին և կազմութեան մէջ: Մարկիոն, եպիսկոպոսի մը զաւակն էր, դաստիարակուած ուղղափառ հաւատքի մէջ ու հաստատուած Հոռմ Բաղաբը, գալով Պոնտոսէն: Այս ականաւոր եկեղեցականը չի կրցաւ հանդուրժել Հին Կտակարանի *նախանձոտ* և *վրէժխնդիր* Աստուծոյ մը տեսութիւնը և մերժեց Հին Կտակարանը որպէս սուրբ գրականութիւն: Որովհետեւ ան չէր հաւասարեր Յիսուս Զրիստոսի յայտնաբանած *բարեգութիւն* ու *ողորմած* Հայր Աստուծոյ:

Մարկիոն հաւաքածոյ մը կազմեց Պօղոս առաքեալի նամակներէն, որովհետեւ իրեն համար Պօղոս առաքեալ միակ հետեւողը եղած սեպեց որ կանխեցաւ Յիսուս Զրիստոսի Աւետարանին, որպէս հաւատարիմ վկայ: Անոր կազմած Նոր Կտակարանը կը ներկայացնէր Պօղոս առաքեալի նամակները և Ղուկասու Աւետարանը, որովհետեւ Ղուկաս բժիշկը գործակիցն ու ճամբորդակիցն էր Պօղոս առաքեալին: Մարկիոնի կը պատկանի պատիւն ու յարգանքը

(Թէեւ աղանդաւոր կոչուեցաւ) Նոր Կտակարանի կանոնականացման տեսիլքը: Հետաքրքրական է գիտնալ որ Մարկիոնն յե՛տոյ է, որ Գործք Առաքելոց Գիրքը և Պօղոսի նամակները սկսան կոչուիլ «Առաքելական» համահաւասար Չորս Աւետարաններուն:

Որպէս հակազդեցութիւն Մարկիոնի "Նոր Կտակարանին", ընդհանրական եկեղեցիներու մէջ տեսիլք մը և շարժում մը սկսաւ Նոր Կտակարանի մը կազմաւորումին: Թէեւ բանադրուած եկեղեցիներու կողմէ, մերժուած իր հարազատ հօր կողմէ և Պօղիկարպոսի կողմէ որպէս «Մատանայի միածին», Մարկիոն իրագործեց աննախընթաց յաջողութիւններ թէ՛ կազմակերպչական և թէ՛ ուսողական գետնի վրայ: Ժամանակի մը համար, հարիւրաւոր եկեղեցիներ և եպիսկոպոսներ, թէ՛ Արեւմուտքի և թէ՛ Արեւելքի մէջ, դարձան անոր հետեւորդները:

Մարկիոնի ստեղծած աղանդաւորական հսկայ շարժումը արթնցուց եկեղեցականներու բուն մտած ոգին: Աստուծոյ սուրբ Հոգին՝ Իր անբարբառ հառաչանքներով, դանդաղ բայց զգալի կերպով, առաջնորդեց հաւատարիմներու և ծառայատէրներու ոգին տեսնելու ճշմարտութիւնները և փոխանակ եկեղեցիները տարրալուծուելով փճանալու, դարձան աւելի զօրաւոր, կազմելով Նոր Կտակարանը որպէս սրբազան գիրքերու

Կանոնական

հաւատքով:

Կնոստիկեան աղանդաւորներ (Բրիստոնեայ) Մերժած էին ձին Կտակարանը և անոր բացայայտած վրէժխնդիր ու ոխակալ Աստուածը, որ անհատականացուած էր միայն Հրեայ ցեղին համար: Ուստի Կնոստիկեան աստուածաբաններ բազմացուցին բազմաթիւ յաւելեալ աւետարաններ, վախճանական գրականութիւններ և վաւերական սեպուած կրօնա-իմաստասիրական աղանդաբանական վարդապետութիւններ: Առաջին դարու կեսէն վերջ բազմացան պարականոն աւետարանները և առաքելական կարծուած նամակագրութիւնները:

Իրէնիմոս, Լիոնի եպիսկոպոսը ամենագրու ընդդիմադիրը հանդիսացաւ Մարկիոնի և Կնոստիկեաններու հերձուածող տեսութիւններուն: Իրէնիմոս ծնեալ (130 թ.) ունկնդիր եղած էր Պօղիկարպոսին և իր մնացեալ եպիսկոպոսական ծառայութիւնը նուիրեց եկեղեցական աջխատութեան: Իրէնիմոս՝ իր Բրիստոնեական ջատագովութիւններուն մէջ կը պանծացնէ Նոր Կտակարանը մէջբերելով բազմաթիւ հատուածներ Չորս Աւետարաններէն և Պօղոս առաքելի նամակներէն: Ան կ'ըսէ.

**«Սրբազան գիրքերը կատարեալ են, որովհետեւ
անոնք արտայայտուած էին աստուածային հոգի-
ով և բարբառով»:**

Հերձուածութեան դէմ, Իրէնիմոսի գրած

«Բրիստոնեական հաւատքի»

Բացատրություն նա գիրքերը, դասական շատագույություններ են բոլոր աղանդա-
ւորներուն դէմ ու պաշտպան Նոր Կտակարանին:

ՏԵՐՏԻՒՂԻԱՆՈՍ (160-220)

Քրիստոնեայ աստուածաբան և գրող: Դատական հոետոր չորմի և Կարթագենի միջեւ: 35 տարեկանին կը մկրտուի և կը դառնայ Բաջ շատագույը Քրիստոնեութեան: Տէրտիւղիանոս յատկապէս կը բնորոշէ Չորս Աետարան-ները և զանոնք կը սեպէ *“Միություն և Միացում”*: Ան աւելի յառաջ կ’երթայ Իրէնիմոսէ և Չորս Աետարաններն ու Պօղոս առաքեալի նամակները կը կոչէ (Novum Testamentum)՝ «Նոր Կտակարան կամ Նոր Ուխտ» զուգակցիւ և համարժէք Հին Կտակարանին: Տէրտիւղիանոս առաջին գրական հեղինակն է, որ կը գործածէ *“Նոր Աշխատ կամ Նոր Կտակարան”*: ոճը ի նկատ քրիստոնեա-կա՛ն սրբազան գիրքերու հաւաքածոյին: Անոր “Նոր Կտակարան” կոչած հաւաքածոն կը պարունակէր Չորս Աետարանները, Պօղոս առաքեալի 13 նամակները, Գործք Առաքելոցը՝, Յայտնութեան գիրքը և երեք ընդհանրական թուղթերը՝ Ա. Յովհաննու, Ա. Պետրոս և Յուդա: Եբրայեցիս գիրքը ան կը վերագրէ Բարնաբասի ու զայն կը կոչէ. «Գործակիցը առաքեալներու ... և հեղինակաւոր անձնաւորութիւն մը:

Ուստի, Տէրտիւղիանոսի Նոր Կտակարանը կը բաղկանար 22 գիրքերէ, որոնց բոլորն ալ մեր ներկայ Նոր Կտակարանի մէջն են: Անոր հաւաքածոյին վրայ յետագային աւելցուած են հինգ յաւելեալ գիրքեր եկեղեցիներու հաւանութեամբ, հեղինակութեամբ և երկասիրութեամբ:

ՈՐՈԳԻՆԷՍ (185-254)

Քրիստոնեայ դպրագէտ, դաստիարակ, մտքի մշակ, Քրիստոնեական փիլիսոփայութեան մտազննութեան հիմնադիր: Որոգինէս բարձր կը գնահատէ մարդկային բանականութիւնը և փիլիսոփայութիւնը, իսկ անոնցմէ գերադաս՝ հաւատն ու կրօնը: Ըստ Որոգինէսի, Քրիստոնեութիւնը հին Յունական և Հրէական մարգարէութեան եզրափակումն է: Անոր համար մարդ արարածին գերագոյն նպատակը՝ ճանչնալ է ճշմարտութիւնը: Անանիա ծիրա-կացին, Յովհաննէս սարկաւազ Վանական Վարդապետ և ուրիշներ անդրադար-ձած ու վկայակոչած են Որոգինէս աստուածաբանը:

Երրորդ դարու սկիզբը Նոր Կտակարանը անվիճելիօրէն ստացած էր իր ներկայ պարունակութիւնը մի քանի գիրքերու զանազանութեամբ: Սոյն տարբերութիւնները երբեք ազդեցութիւն չգործեցին Չորս Աետարաններու, Պօղոս առաքեալի 13 թուղթերուն, ոչ ալ Գործք Առաքելոց թուղթին, որոնք անժխտելի իրողութիւններ դարձած էին: Յայտնութեան գիրքը կանոնագրուած էր, սակայն հեղինակը տարակուսելի էր տակաւին: Մնացեալ մի քանի գիրքերու կանոնագրութիւնը յետաձգուեցաւ մինչեւ երրորդ և

չորրորդ դար. Յոյն և Լատին եկեղեցիներու միջեւ ըլլալի՞ք համաձայնութեան: Երրորդ դարու սկիզբը, Որոգինէս՝ աստուածաշնչական մեծագոյն դպրագէտը փոխարինած էր Կղեմէս Աղեֆսանդրացին որպէս առաջնորդ Աղեֆսանդրիոյ ճեմարանին (203 թուին): Ան բերաւ իր 50 տարիներու բացառիկ օժանդակութիւնը և աստուածաբանական հմտութիւնը ի նպաստ եկեղեցիին: Որոգինէսի մօտեցումը և մտածելակերպը հին և Նոր Կտակարաններու հանդէպ համազօր և համարնդունելի էր: Իրեն համար երկուքն ալ սրբազան գրութիւններ կը ճանչցուէին, որոնք ջնորհուած էին մարդկութեան փրկագործութեան համար միեւնոյն հոգեշունչ Լուսաւորութենէն:

Որոգինէս այցելած էր բազմազան երկիրներ՝ Հռոմ, Յունաստան, Փոքր Ասիա, Եգիպտոս և Պաղեստին, ու նկատած թէ՛ եկեղեցիներու համաձայնութիւնները և թէ՛ անոնց վիճելի տարբերութիւնները հանդէպ Նոր Կտակարանի հեղինակութեան: Որոգինէս մեծ իմաստութեամբ և առանց որեւէ մէկը դատապարտելու կ'ըսէ, ըստ Յովսէպիոս պատմաբանին.

«Մենք կը հաստատենք միայն այն, զոր եկեղեցին կը վաւերացնէ, որոնք են, Յորս Աւետարանները՝ անհերքելիօրէն ընդունուած եկեղեցիներու կողմէն երկնի տակ»:

Մեծն Կոստանդիանոսի յանձնարարութեամբ, Յովսէպիոս պատմաբան պատրաստեց 50 հատ կանոնագրուած Նոր Կտակարաններ գրուած մագաղաթի վրայ: Դժբախտաբար սոյն գիրքերէն և ո՛չ մէկը գոյութիւն ունի այսօր:

ՉՈՐՐՈՐԴ ԳԱՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԱԾ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

1. Կիւրեղ Երուսաղէմացիի ցանկը կը պարունակէ մեր ներկայ Նոր Կտակարանի 27 գիրքերու 26 հատը: Յայտնութեան գիրքը անոր ցանկին մէջը չէ:
2. Գրիգոր աստուածաբան Նազիանզացի (330 թ.) իր ցանկին մէջ ունի Կիւրեղ Երուսաղէմացիի Նոր Կտակարանին ցանկը:
3. Աթանաս Աղեֆսանդրացի, առանց տատանումի, ունի 27 գիրքեր յար և նման մեր Նոր Կտակարանին:
4. Յովհաննէս Ոսկեբերան Անտիոքի և Պոլսոյ պատրիարքը՝ իր ցանկին մէջ ունի միայն 22 գիրք:

Եկեղեցիներու միջեւ տեղի ունեցած վիճելի գիրքերը, սկսեալ Երկրորդ դարէն, ոչ թէ Յորս Աւետարաններու մասին եղած է, այլ Յայտնութեան, Երրայեցիս, Յակոբոս, Ա. Պետրոսի, Ա. Յովհաննէս թուղթերուն մասին է: Վերոյիջեալ գիրքերը թէեւ ընդունուած են կանոնական Նոր Կտակարանին

մէջ, սակայն կրկին վիճելի են կարգ մը աստուածաբան ուսումնասէրներու կողմէ ցարդ: Հաւատացեալներու մեծ մասը որոնք չունին պատմական հմտութիւն կամ ծանօթութիւն, երբ իմանան Նոր Կտակարանի մասին տեղի ունեցած վիճելի հարցերը, այնպէս կը կարծեն, թէ այդ վիճաբանութեան առարկան Ջորս Աւետարաններն են ... սակայն այդ չէ՝ ճշմարտութիւնը կամ իրողութիւնը:

Նոր Կտակարանի նկատմամբ կանխագոյն գրողները եղած են Հռոմի Եկեղեցւոյ Կղեմէս եպիսկոպոսը (100 թուին): Պօղոկարպոս (69-155) Եփեսոսի եպիսկոպոսը ու աջակերտ Յովհաննէս առաքեալին: Սուրբ Իգնատիոս՝ Անտիոք Բաղափին երրորդ եպիսկոպոսը, որ նահատակուեցաւ Հռոմի մէջ, Տրաժան կայսրի օրով: Սոյն երեք ականաւոր եկեղեցական սուրբերը բազմաթիւ մէջքերումներ ու վկայութիւններ ըրած են իրենց նամակագրութիւններուն մէջ, որոնք առնուած են Ջորս Աւետարաններէն և Պօղոս առաքեալի թուղթերէն:

Միթէ վերոյիշեալ սուրբ եպիսկոպոսներու մէջքերումները վկայեա՛լ ապացոյցներ չե՞ն որոնք կանխօրօք այս սուրբերը հաւատացած և ընդունած էին սոյն Ջորս Աւետարաններու և Պօղոս առաքեալի թուղթերը որպէս սրբազան և սրբաշունչ գրութիւններ:

Զաննորդ դարու դիւրակեցութեան և հանգստութեան վարժուած Բննադատներու համար ջատ հեշտ է Բննարկել և պախարակել իրենց **չգիտցած իրողութիւնները** և դէպքերը, որոնց համար ո՛չ մէկ զոհողութիւն կը պահանջուի ետամուլ ու փառատենչիկ "մտաւորականներէ": Զմոռնանք, որ այդ կանխագոյն սուրբերը ո՛չ թէ **փառքի** համար նահատակուեցան, այլ որպէս ճշմարտութեան **ռահվիրաներ**: Ոչ թէ զոհեցին միայն իրենց հանգիստը, այլ կեր եղան վայրի գազաններուն և ճիւղ կայսրերու: Որպէս *հանդիսատէս* խօսիլն ու Բննադատելը *դժգոհի* արտայայտութիւն է միայն, որ դրական ոչինչ ունի:

Բննադատի ակնոցով չմտենանք այս բազմաչարչար և նահատակ եկեղեցիին և անոր սրբազան գիրքերուն: Փոխանակ զանոնք Բննադատելու, *խոնարհի՛ւմ* անոնց դիւցազնական և հոգեշունչ պատգամներուն և հեղինակներուն:

«Ազգային գրականութիւնը իր ծաղկման ու զարգացման մէջ ջատ բան կը պարտի Էբրայեցի Բերթողներուն ու մտածողներուն, ինչպէս որ անոնց ջատ բան կը պարտին Տանթէներն ու Միլտոնները, Լաւարթիներն ու Հիւկոները»--Արշակ Զօպանեան:

«Ով չի կարդացել Աստուածաշունչը, նա չի կարող իսկական իմաստով գրագէտ մարդ կոչուել, առաւել եւս՝ գրականագէտ: Նրա

հիման վրայ են ստեղծուել համաշխարհային գրականութեան ու արուեստի գլուխ գործոցները: Վկայ՝ «Աստուածային Կատակեր-գութիւն»ը, Լարենկը, Ռաֆայէլը: Հիմա արդէն գիտութիւնը սկսել է լրջօրէն զբաղուել Աստուածաշնչի պատմական ու առասպելական հիմքերի քաջատրութեամբ: Բանից պարզում է, որ մտացածին համարուած հրաշապատումները բնաւ էլ ցնդաբանութիւններ չեն, և անցած Բաղաճակրթութեան ուսումնասիրութիւնը դեռ ջատառեղ-ծուածներ կը բացի Աստուածաշնչի էջերում: --Պարոյր Սեակ:

Աստուածային ստեղծագործ սերը, ինչպէս որ խոնարհեցաւ (իջաւ) աշխարհ պարգեւելու համար սիրոյ և իմացական կեանք մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս բարձրանալու է դէպի տիեզերական Աէր և Կեանք ուր պիտի գտնէ իր Արարիչն ու ողորմած Տէրը:

«Աստուած ամենուրեք է և ամէն ինչի մէջ»

*«Զի դու միայն ես երկնում անձառ և երկրում
անգնին,
Գոյութեան տարրերի մէջ և աշխարհի բոլոր
ծագերում,
Ակիզքն ամէն ինչի, և ամէն ինչի մէջ՝ ամբողջ
լրումով»--Ա. Գրիգոր Լարենկացի*

Գրուած Յունուար 28, 1994
Թորոնթօ

